

4 - 80

Ն. ԿՈՒԼԵՆԿՈ

ԽՍՀՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ
ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅԿՈՒՄՐԱՏ ▲ 1937 ▲ ՅԵՐԵՎԱՆ

342.7
4-80

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆՔ

71 MAR 2010

Ն. ԿՈՒԼԵՆԿՈ

342.7

4-80

ԽՍՀՄ-Ի ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ
ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թարգմանություն յերկրորդ,
վերամշակված հրատարակությունից



24 MAY 2013

35.541

Ստալինյան Սահմանադրությունն իրենով նշանափորում է հաղթանակած սոցիալիզմի յերկրի քաղաքական կյանքի պատմական շրջադարձը:

ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը ներկայացնում է խոկական սոցիալիստական դեմոկրատիզմի հիմունքներով պետություն կառուցելու նմուշ, վորը գեռես չի տեսնված պատմության մեջ:

Ստալինյան Սահմանադրությունն «իրենից ներկայացնում է անցած ժանապարհի հանրագումարը, արգեն ձեռք բերված նվաճումների հանրագումարը», հանդիսանում է «զրանցումն ու որևէնսդրական ամրապնդումն այն բանի, ինչ վոր արդեն ձեռք ե բերված ու նվաճված իրականում»¹:

ԽՍՀՄ-ի Սահմանադրության տասներորդ գլուխը պարունակում է ԽՍՀՄ-ի քաղաքացիների հիմնական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կանոնները:

Այդ բաժնում ամրացված են սոցիալիստական հեղափոխության մեջ նվաճված՝ քաղաքացիների մեծ իրավունքը և վորչված են նրանց հիմնական պարտականությունները ԽՍՀՄ-ում սոցիալիզմի վերջնական հստատման դարձարձանում:

Իր նշանակությամբ, խորիմաստությամբ և բովանդակությամբ այդ բաժնն ամենասերտ կերպով կազմված է Սահմանադրության սուային բաժնի՝ ԽՍՀՄ-ի հասարակական կառուցվածքի հետ:

Ուսի հոռարդի հետ ունեցած իր զրույցում ընկեր Ստալինը բացառիկ հստակությամբ բնորոշեց մեր հասարակության եյտթյունն ու բնույթը: Նա ասել է այսպիս:

«Հասարակական այն կազմակերպությունը, վոր ստեղծել ենք մենք, կարելի յե անվանել խորհրդային սոցիալիս-

¹ Ստալին. Ձեկուցում ԽՍՀ Միության Սահմանադրության նախադիմության հորժութանքի VII համամիութենական Արտակարգ համագումարում:

Н. КРЫЛЕНКО
ОСНОВНЫЕ ПРАВА И
ОБЯЗАННОСТИ
ГРАЖДАН СССР

Армпартиздат, Ереван, 1937

3986-84



տական, զեռ լիովին չավարտված, կաղմակերպություն, բայց իր հիմքով հասարակության սոցիալստական կաղմակերպություն։ Այդ հասարակության հիմքն է կաղմում հանրային սեփականությունը, պետական, այսինքն համաժողովրդական, ինչպես նաև կոռագերատիվ-կոլտնտեսային սեփականությունը...

Սակայն այդ հասարակությունը մենք կառուցեցինք վո՞չ թե անձնական ազատությունը սահմանափակելու համար, այլ նրա համար, վոր մարդկային անձնավորությունն իրոք ազատ զգա իրեն։ Այդ հասարակությունը մենք կ'ուրցեցինք անձնական իրական ազատության, առանց չակերտների ազատության համար։ Յես դժվարանում եմ պատկերացնել, թե ինչ «անձնական ազատություն» կարող ե ունենալ դորձադուրկը, վորը քաղցած ման և դալիս և իր աշխատանքը դորձադրելու ասպարեզ չի դատում։ Իսկական ազատություն կամիայն այնտեղ, վորտեղ վոչչացգված և շահագործումը, վորտեղ չկա վորոշ մարդկանց ճնշումը մյուսների կողմից, վորտեղ չկա զործազրկություն և աղքատություն, վորտեղ մարդը չի դողում, թե վաղը կարող ե կորցնել աշխատանքը, բնակարանը, հացը։ Միայն այդպիսի հասարակության մեջ հնարավոր ե անձնական ու այլ ամեն տեսակ իսկական և վո՞չ թե թղթե ազատությունը»¹։

Այս վերին աստիճանի հստակ, պարզորոշ ձևակերպման մեջ ընկեր Ստալինը տվել է այն հասարակակարգի բնութագրությունը, վորի մեջ մենք ապրում ենք, մատնանշել ե, վոր այս կարդը յուրաքանչյուր աշխատավորի տալիս ե ոեալ, իսկական և վոչ թե ֆիկտիվ, վոչ թե խարուսիկ ազատություն։

Այստեղից ել հետո ե վորոշել, թե ինչ որգանական կազ դոյտիյունի առաջին բաժնի—հասարակական կառուցվածքի—և տասներորդ բաժնի—քաղաքացու հիմնական իրավունքների ու սլարտականությունների վերաբերյալ բաժնի—միջն։

Սահմանադրության առաջին բաժնում խոսվում է այն մասին, վոր Խորհրդային պետությունը բանվորների և գյուղացիների սոցիալստական պետություն ե։ ԽՍՀՄ-ի քաղաքական հիմքը կաղմում են աշխատավորների պատգամավորների խորհրդադիրներ։ ԽՍՀՄ-ի տնտեսական հիմքը կաղմում են տնտեսության սոցիա-

լիստական սիստեմը և դորձիքների ու արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունը։

Կոլտնտեսությունների զբաղեցրած հողն ամրացվում և նրանց անվճար և անժամկետ, այսինքն առհավետ ուղագործման համար։

Քաղաքացիների՝ իրենց աշխատանքային յեկամուտների և խնայողությունների անձնական սեփականության իրավունքը, ինչպես նաև քաղաքացիների՝ անձնական սեփականությունը ժառանգելու իրավունքը պաշտպանվում են որենքով։

Այդ հիման վրա ԽՍՀՄ-ի տնտեսական կյանքը վորոշվում և ուղղություն է ստանում պետական ժողովրդա-տնտեսական պլանով։

ԽՍՀՄ-ում, հաղթանակած սոցիալիզմի յերկրում, իրագործվում է կոմունիզմի ստորին փուլի սկզբունքը, —«Յուրաքանչյուրից ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրինը ըստ նրա աշխատանքի»։

Սրանով ըստ եյության վորոշվում են ԽՍՀՄ-ի քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները։

Արտահայտելով հասարակության փոփոխված դասակարգացին կառուցվածքը, նրա քաղաքական և տնտեսական հիմունքները, ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը յենում է այն բանից, վորմեր հասարակության մեջ

«...այլևս հակամարտ դասակարգեր չկան, վոր հասարակությունը բաղկացած է յերկու միմյանց բարեկամ դասակարգերից՝ բանվորներից ու գյուղացիներից, վոր իշխանության գլուխ են կանգնած հենց այդ աշխատավորական դասակարգերը, վոր հասարակության պետական զեկավարությունը (գիկտատուրան) պատկանում է բանվոր դասակարգին՝ վորպես հասարակության առաջավոր դասակարգի, վոր Սահմանադրությունը հարկավոր ե նրա համար, վորպեսզի ամրապնդենք աշխատավորությանը ցանկալի և ձեռնուու հասարակական կազըրերը»¹։

ԽՍՀՄ-ի մեջ իրականացված է այնպիսի հասարակություն, վորտեղ չկա շահագործում, վորտեղ չկա զործազրկություն, վորտեղ մարդը չի դողում այն բանի համար, վոր կարող ե վաղը կորցնել աշխատանքը, բնակարանը, հացը։ Մենք ապրում ենք

1 Բնկեր Ստալինի զբույցը պարոն Բոյ Հոռարդի հետ, եջ 24, 27, Հայկական բառ, 1936 թ.։

այնպիսի հասարակության մեջ, վորտեղ աշխատանքային հասակի հասած յուրաքանչյուր վոք պարտավոր և աշխատել, վորտեղ յուրաքանչյուրին ապահովված և նրա ընդունակություններին համապատասխան աշխատանք :

Տասներորդ գլուխը այս հիմնական դրություների լույսի տակ կարող է կոչվել մի բաժին, վորը բովանդակում և ԽՍՀՄ-ի քաղաքացու—սոցիալիստական հասարակության ազատ աշխատավորի—նվաճակած և որենքով ամրապնդված իրավունքների դեկլարացիան :

Աշխարհում չկա վոչ մի յերկիր, վորը կարողանա հակադրել վորեն բան, վորը հիշեցնի իրավունքների մեր սոցիալիստական գեկլարացիայի սկզբունքները : Այդպիսի յերկիր չկա աշխարհում, վորովհետեւ միմիայն ԽՍՀՄ-ում

«... մենք այժմ ունենք նոր, սոցիալիստական եկոնոմիկա, վորը չդիտե ճղնաժամեր ու գործազրկություն, վորը չդիտե աղքատություն ու քայլայում և վորը քաղաքացիներին տալիս և ունենոր ու կուլտուրական կյանքի բոլոր հնարավորությունները»¹ :

Դրա մեջ ե մեր Սահմանադրության, վորպես սոցիալիստական հասարակության Սահմանադրության, համաշխարհային նշանակությունը, դրա մեջ ե նաև ԽՍՀՄ-ի քաղաքացու հիմնական իրավունքների ու պարտականությունների բաժնի համաշխարհային նշանակությունը :

Անցյալում յեղե՞լ են, արդյոք, իրավունքի ուրիշ գեկլարացիաներ, վորոնք մտել են պատմության մեջ և իրենց դարաշրջանի համար ունեցել են վորոշ նշանակություն : Այո՛, այդպիսի գեկլարացիաներ յեղել են, և վոչ թե մեկը, այլ միքանիսը :

Վերջնենք Ամերիկայի Միացյալ Նահանգների անկախության գեկլարացիան, վորն ընդունվել ե 1776 թվի հուլիսի 4-ին : Այդ յեղել ե սրանից 160 տարի առաջ : Ահա թե ինչ ելին վրում ամերիկացիները, յերբ նրանք կազմակերպեցին իրենց պետությունը, հաղթանակ տանելով քաղաքացիական պատերազմում, իրենց անկախության համար մղվող կովում :

«Մենք ակնհայտ ենք համարում հետեյալ ճշմարտությունները, — վոր բոլոր մարդիկ հավասար են ստեղծված, վոր նրանք իրենց արարչէ կողմից ոժտված են մի քանի անկախությունը :

1 Այսպիսի Զեկուցում ԽՍՀ Միության Սահմանադրության նախագծի մասին նորհուրդների V/II համախութենական Արտակարգ համագումարում :

Վունքներով, վորոնց թվում են կյանքը, աղատությունը և յերջանկության ձգտումը, վոր այդ իրավունքների ապահովությունը, համար մարդկանց մեջ կառավարություններ են հաստատվում, վորոնց արդար իշխանությունը բղխում և կառավարողների համաձայնությունից, վոր յերբ կառավարման վորեւ ձև կորստարեր և դառնում այդ նպատակի համար, ապա ժողովուրդն իրավունք ունի փոխելու կամ վաչնչացնելու այն և նոր կառավարություններուն հաստատելու, այն հիմնելով այնպիսի սկզբունքների վրա և նրա իշխանությունը կազմակերպելով այնպիսի ձեռվ, վորոնք նա կհամարի ամենից ավելի պիտանի՝ իր անվտանգության և յերջանկության իրականացման համար : Խոհեմությունն, իհարկե, թելադրում ե, վորպեսի վազուց ի վեր հաստատված կառավարությունները չփոփոխվեն դատարկ և անցողիկ պատճառներով, և դրան համաձայն, ամբողջ փորձը ցույց ե տալիս, վոր մարդկությունն ավելի տրամադրելու, քանի չարփքը հանդուրժելի յե, քան վերականգնելու իր իրավունքները, վոչնչացնելով այն կարգերը, վորոնց նա վարժված ե : Սակայն յերբ չարարկությունների և բռնությունների յերկար շարքը, անփոփոխ կերպով հետապնդելով միենույն նպատակը, դրսերում ե մարդկանց բացարձակ բռնապետության յենթարկելու մտադրություն, ապա նրանց իրավունքը, նրանց պարտքն և տապալել այդպիսի կառավարությունը և նոր պահապաններ կարգել իրենց ապարա անվտանգության համար»¹ :

Ի՞նչ ե ասում այս գեկլարացիան :

Այն, վոր բոլոր մարդիկ հավասար են ստեղծված, վոր նրանք իրենց «արարչի» (այսինքն աստծու) կողմից ոժտված և կյանքի, աղատության և յերջանկության ձգտելու անկապտեհի իրավունքներով, վոր կառավարությունը պետք ե արդարաժիռ լինի, վոր անարդար, բռնապետական կառավարությունը պետք ե տապալիք : Ահա բոլորը :

Այսպիսի գեկլարացիան չեր կարող յուրաքանչյուր աշխատավորի համար ապահովել կյանք, աղատություն և յերջանկության ձգտում, վորոնք նրա «անկապտելի» իրավունքներն են :

Քանի տնտեսական անհավասարություն դոյտթյուն ունի, քանի կապիտալիստական սեփականություն կա, քանի կա արտա-

1 «Բարքության յերկիրների սահմանադրությունները», Հ. I, Էջ 15, ՀՕՊԷԿՐՊՑ, 1935 թ. :

դրության միջոցների մասնավոր սեփականություն, քանի վու-
մանք ամեն բան ունեն, իսկ մյուսներն իրենց աշխատող ձեռքե-
րից բացի վոչինչ չունեն—այդ ապահովություն չեն:

«Բուրժուական սահմանավրությունները սովորաբար
սահմանափակվում են քաղաքացիների ձևական իրավունքնե-
րի Փիքսացիայով, չչողալով այդ իրավունքների կենսագործ-
ման պայմանների մասին, դրանց կենսադործման հնարավո-
րության մասին, դրանց կենսադործման միջոցների մասին»¹:

Հաղթանակած արցիալիզմի ստալինյան Սահմանավրու-
թյունը

«... չի սահմանափակվում քաղաքացիների ձևական
իրավունքների Փիքսացիայով, այլ ծանրության կենտրոն է
դարձնում այդ իրավունքներն ապահովելու հարցը, այդ
իրավունքների իրականացումն ապահովելու միջոցների
հարցը»¹:

ԱՄԵՐԻԿԱՆ անկախության գեղարացիայի մեջ մենք դանում ենք
նույնիսկ ցուցում, վոր այդ իրավունքներից ողտվելը կարող է
դադարեցվել, յեթե այդ պահանջի հանրային անվտանգությու-
նը, խորվության կամ ապատամբության դեպքում:

Սակայն ո՞վ պիտի զաղարեցնի զեղարացիայի մեջ մատնա-
նշված իրավունքներից ողտվելը:

Մասնավոր սեփականության և շահագործման սկզբունք-
ներով կառուցված բուրժուական հասարակության կառավարու-
թյունը:

ԵԼ Ի՞նչ մնաց այդ իրավունքներից, վորոնք, ինչպես ապահո-
ւութեալ զեղարացիայի մեջ, «տեր աստվածն ինքն և պարզեել»:

Վոչինչ:

Այդ զեղարացիան այդպիսով յեղել ու մնում է իրավունք-
ների սոսկական հոչակում, առանց դրանց ուեալ ապահովման:

Ահա ձեզ անցյալի զեղարացիաների որինակներից մեկը:
Դումանք զեղարացիաներ եյին դրում, մյուսները հավատում
եյին դրանց և չեյին մտահողվում այն բանով, թե արդյոք այդ
զեղարացիաները քաղաքացիների իրավունքների իրական ապա-
հովություն համարիսանո՞ւմ են, թե վոչ:

Վերցնենք «Մարդու և քաղաքացու իրավունքների զեղարա-
ցիան», վոր հոչակված և ֆրանսական բուրժուական հեղափո-

1 Ստալին. Զեկուցում ԽՍՀ Միության Սահմանադրության սահմանադրի մա-
սին Խորհուրդների VIII համամիութենական Արտակարգ համակումարում:

Խության ժամանակ 1789 թվին: Ահա թե ինչ և ասում այդ դեկ-
լարացիան.

«1) Մարդիկ ծնվում և մնում են ազատ ու հավասար իրա-
վունքներով: Հասարակական տարբերությունները կարող են
հիմնվել միայն ընդհանուր ոգուտի վրա:

2) Ամեն մի քաղաքական միության նպատակն է պահպանել
մարդու բնական և անոտարելի իրավունքները: Այդ իրավունք-
ների եյությունն են կաղմում ազատությունը, սեփականությու-
նը, անվտանգությունը և ընդդիմագրությունը կեղեցմանը...

4) Ազատությունն ամեն բան անելու իրավունքն է, վորը
վնաս չի հասցնում ուրիշին, այսպիսով, յուրաքանչյուր մարդու
կողմից իր բնական իրավունքների վայելումը՝ սահման չունի,
բացի այն իրավունքներից, վորոնք հասարակության այլ անդամ-
ների համար ապահովում են նույն իրավունքների վայելումը:
Այդ սահմանները կարող են վորոշվել միայն որենքով»:

Այսպես, ուրեմն, ազատություն և սեփականու-
թյուն: Այդ բոլորն անկապտելի իրավունքներ են:

Իսկ մենք գիտենք, թե ինչ բան և մասնավոր սեփականու-
թյունը և գործնականում այն ինչի յե հանդեցնում:

Դեկարացիան այնուհետև ասում է.

«Վոչ վոք չի կարող մեղադրվել, ձերբակալվել կամ բան-
տարկվել այլ կերպ, քան այն գեղագրելում, վորոնք վորոշված են
որենքով, և այն ձեերով, վորոնք հրամանագրված են այդ որեն-
քում...

Վոչ վոք չպիտի անհանդստացվի իր, նույնիսկ կրօնական,
կարծիքների համար, միայն թե դրանց դրսեորումը չխախտի
որենքով սահմանլած հասարակական կարգ ու կանոնը:

Մարդիկ ու կարծիքների ազատ հաղորդումը մարդու ամե-
նաթանգագին իրավունքներից մեկն ե, —յուրաքանչյուր քաղա-
քացի կարող ե, հետևաբար, ազատ խոսել, գրել, տպագրել—
պայմանով, վոր պատասխանառու լինի այդ ազատության չա-
րարկումների համար՝ որենքով վորոշված գեղագրելում»:

Այսպես, ուրեմն, մի կողմից՝ բոլոր մարդիկ հավասար
են, բոլոր մարդիկ ազատ են, իսկ մյուս կողմից այդ ազատ
մարդիկ կարող են ազատ գործել միայն որենքով գծված
սահմաններում: Իսկ որենքներն ո՞վ ե սահմանում: Ի՞նչ բան և
որենքը: Լենինն ասում է.

«Այն դասակարգերի կամքի արտահայտությունը, վորոնք հաղթել են և իրենց ձեռքում են պահում սկստական էշխանությունը»¹:

Մարքսը սովորեցնում եր, վոր նախընթաց հասարակության ամբողջ պատմությունը, սկսած այն ժամանակից, յերբ հասարակությունը տրոհվել է հակադիր դասակարգերի, յեղել և դասակարգերի կովի պատմություն։ Հետեւարար, յեթե իշխանության դրուխ կանգնած է շահագործող դասակարգը, ապա որենքը կլինի շահագործող դասակարգի կամքի արտահայտությունը։ Իսկ յեթե այդ այդպես է, ապա իրավունքների բուրժուական գեկլարացիան ըստ եյության ապահովում է միայն բուրժուագիի, վորպես իշխանության զլուխ կանգնած շահագործող դասակարգի, կամքի իրականացումը։ Զուր չե, վոր այդ գեկլարացիան, ի թիվս հիմնական իրավունքների, ամրապնդել և մասնավոր սեփականության իրավունքը, այսինքն մարդու կողմից մարդուն շահագործելու և ճնշելու իրավունքը։

Այդ գեկլարացիան ել աշխատավորության համար մնաց վորպես դատարկ հնչյուն, իրավունքների սոսկական հոչակում։

Մի հայացք ել գցենք 1793 թվի սահմանադրության իրավունքների գեկլարացիայի վրա, վորը յերբեւից յեղած բուրժուական գեկլարացիաներից ամենից ավելի արմատական, ամենից ավելի դեմոկրատականն է։ Նա առաջ յեկալ այն մոմենտին, յերբ Ֆրանսիայում իշխանության զլուխ կանգնել եյին ամենից ավելի արմատական, հեղափոխական բուրժուական չերտերը։ Այդ գեկլարացիայի մեջ ասվում եր.

«Կառավարությունը սահմանված է, վորպեսզի մարդու համար ապահովի նրան պատկանող բնական և անկապտելի իրավունքների վայելումը։

Այդ իրավունքներն են—հավասարություն, ազատություն, անվտանգություն, սեփականություն։

Այսպիսով, յերբեւից զոյություն ունեցած բուրժուական սահմանադրություններից ամենաարմատականը դանում եր, վոր մասնավոր սեփականությունը, այդ թվում արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, մարդու սրբազն իրավունքն է։

1 Կնքին, Սոցիալ-դեմոկրատիայի առքարային ծրագիրը սուսական սուաջին հեղափոխության ժամանակ։ Յերկ. հ. XI, էջ 418 (սուսերեն)։

7-րդ հոդվածում դրված էր.

«Չեն կարող արգելվել վո՞չ իրենց մտքերն ու կարծիքներն արտահայտելու իրավունքը, լինի այդ մամուլի միջոցով կամ այլ կերպ, վո՞չ խաղաղ ժողովների իրավունքը, վո՞չ ել պաշտամունքների ազատ կատարումը։ Այդ իրավունքների հոչակման անհրաժեշտությունը բղխում և բնապետության առկայությունից և նրա մասին յեղած թարմ հիշողությունից։

Սահմանադրությունը, այսպիսով, սահմանում եր մամուլի, խոսքի ու ժողովների, կարծես թե վոչնչով չսահմանափակված, աղատություն։

Իսկ այդ գեկլարացիայի 35-րդ հոդվածը բացի դրանից առում եր.

«Յերբ կառավարությունը խախտում է ժողովրդի իրավունքները, ժողովրդի յուրաքանչյուր հատվածի համար ապահովածքությունը կաղմում է իրավունքներից ամենասրբազնը և պարտականություններից՝ ամենաանհրաժեշտը։

Սակայն դասակարգային կովի հետաղա զարգացումը շատ չուղով ցույց տվեց, վոր գեկլարացիան այլ բան է, իսկ ունակ կյանքը և զասակարգային կովի շահերը—այլ։

1793 թվի սահմանադրությունը յիրբեք չկիրառվեց կյանքում և, այդպիսով, նույնպես մնաց չիրականացված գեկլարացիա։

Մենք այս որինակները բերում ենք նրա համար, վորպեսզի ցույց տանք, վոր իրավունքների գեկլարացիաներն անխուսափելիորեն զատապարտված եյին դառնալու զատարկ թղթի կտոր և հոչակված, բայց վոչնչով չապահովված իրավունքներ։ Վորովհետեւ զասակարգային հասարակության մեջ հավասարությունը հոչակելը դեռ բավական չե նրա համար, վորպեսզի մարդեկ իրոք աղատ լինեն։ Կյանքը ցույց տվեց, վոր հարցի լուծումը վոչ թե հավասարության և աղատության իրավունքների հոչակումն է, այլ զասակարգերի վոչնչացումը, աշխատավորության համար այդ հավասարության ու աղատության հետաղա նյութական ու իրական ապահովումը։ Կյանքը ցույց տվեց, վոր քանի դոյություն ունեն զասակարգերը, քանի գոյություն ունի մարդու շահագործումը մարդու կողմից, այնքան ժամանակ հավասարության և աղատության մասին չի կարելի խոսել։

Վորպես որինակ բերենք ևս մի գեկլարացիա, վորն ընդունվել և Ֆրանսիայում 1848 թվի հեղափոխության դարաշրջանում։

1848 թվի հեղափոխության ժամանակ Փարիզի պրոլետա-

բիտը պահանջում եր, վորպեսզի նրա համար ապահովելու վոչ միայն քաղաքական ազատություն, այլև աշխատանքի իրավունք, հենց այն իրավունքը, վորի մասին մենք դեռ խոսելու յենք: Այն ժամանակ բուրժուազիան ահա թե ինչ պատասխանեց բանվորներին:

«Ֆրանսական հանրապետության կառավարությունը պարտավորվում է բանվորի համար յերաշխավորել նրա գոյությունը պահպանելն աշխատանքով, նաև պարտավորվում է աշխատանք պահպանել բոլոր քաղաքացիներին»:

Նա ընդունում է բանվորների համար միություններ կարմելու իրավունքը՝ իրենց աշխատանքի որինական պատուղներից ողբերու համար»:

Այսպես, ուրեմն, բուրժուազիան 1848 թվի փետրվարին ընդունեց, վոր պետությունը պետք է աշխատանքով ապահովի բոլոր աշխատավորներին: Իսկ իրականում բուրժուազիան աշխատանքի փոխարեն բանվորներին արձիճ ու մահ ավեց 1848 թվի հունիսին: Բուրժուազիան այսպես պատասխանեց բանվորների՝ իրենց գոյությունը նյութապես ապահովելու վերաբերյալ արդար պահանջներին: Բանվորները աշխատանքի իրավունքը, այսինքն աշխատելու իրավունքը պահանջեցին բոլոր մյուս աղատություններից առաջ, իսկ ի պատասխան նրանք արձիճ ստացան: Սրանք են դասակարգացին կովի դասերը: Այս որինակների շարքով մենք տեսնում ենք, վոր բուրժուազիան սահմանադրությունը, վորը հայտարարել ե «ժողովրդական իրավունքներ ու աղատություն», պաշտպանում է միայն մեկ իրավունք—մասնավոր սեփականության իրավունքը և միայն մեկ աղատություն—աշխատուժի առուծախի աղատությունը, ուրիշի աշխատանքի յուրացման աղատությունը:

Աշխատանքի իրավունք յերաշխավորելու վերաբերյալ բանվորների պահանջին ճիշտ այսպիսի պատասխան տալիս են բոլոր կապիտալիստական յերկրները մինչև այժմ, այդպիսի պատասխան կտան առաջիկայումն ել, քանի գոյություն կունենան կապիտալիստական կարգերը:

Վերցնենք «Աշխատանքի խարտիան», վորն իտալական ֆաշիստական կառավարությունն ընդունել է 1927 թվի ապրիլի 21-ին: Աշխատանքի իրավունքի մասին նաև այսպես է խոսում.

«Աշխատանքը նրա բոլոր ձեւերով—ինտելեկտուալ, տեխնիկական և Փիզիկական—հանդիսանում է սոցիալական պարտք:

Հենց դրա համար ել նա վայելում է պետության պաշտպանությունը: Ամբողջ արտադրությունն ազգային տեսակետից ներկայացնում է միասնական ամբողջություն և նպատակ ունի ապահովել արտադրողների բարեկեցությունը և աղղային հզրության զարգացումը»¹:

Այլ խոսքերով՝ նա ասում է,—բանվոր, զու պարտավոր և աշխատել, յերբ աշխատանք կա, յերբ գործատերն աշխատանք և տալիս քեզ: Սակայն խարտիայի մեջ չի ասված, թե պետությունը պարտավոր է աշխատանք տալ, յերբ գործատերն այն չի տալիս: Այդ չի գրված և չի կարող դրել վո'չ մի բուրժուազիան կառավարություն, վո'չ մի կապիտալիստական պետություն:

Ահա թե ինչու Մարքսը, Ենգելը, Լենինը, Ստալինը միշտ ել բուրժուազիան սահմանադրությունները համարել են անհետեղական, կիսատ, խարեյություն ու կեղծավորություն: Ահա՛ թե Լենինն ինչպես ե բնութագրել բոլոր բուրժուազիան գեկարացիաների նշանակությունը.

«Ինչ ձեւերի տակ ել թագնվի հանրապետությունը, թող վոր այդ լինի ամենալեմոկրատական հանրապետությունը, բայց յեթե նա բուրժուազիան է, յեթե նրա մեջ մնացել է հոգի, գործարանների և Փարբեկանների մասնավոր սեփականություն և մասնալոր կապիտալը վարձու ստրկության մեջ և պահում ամբողջ հասարակությունը, այսինքն յեթե նրա մեջ չի կատարվում այն, ինչի մասին հայտարարում է մեր կուսակցության ծրագիրը և Խորհրդային Սահմանադրությունը, ապա այդ պետությունը մեկի կողմից մյուսներին շահագործելու մեջենա յե: Յեվ այդ մեջենան մենք կվերցնենք այն դասակարգի ձեռքը, վորը պետք է տապալի կապիտալի իշխանությունը: Մենք գեն կնեանք բոլոր հին նախապաշարումներն այն մասին, թե պետությունը ընդհանուր հավասարություն է,—այդ խարեյություն է. քանի շահագործում կա, չի կարող հավասար լինել սանվորին, քաղցածը՝ կուշտին»²:

«Հին կամ բուրժուազիան դեմոկրատիան հայտարարում և աղատություն և հավասարություն, հավասարություն ան-

1 «Բուրժուազիան յերկրների սահմանադրությունները», Հ. 1, եջ 161. ՀՕՊԹՔԱՑ, 1935 թ.:

2 ԱՅԻ, Պետության մասին, Յերկ. Հ. XXIV, եջ 376—377 (սուս.):

կախ այն բանից, թե մարդը արդյոք սեփականություն ունի^c,
թե վոչ, անկախ այն բանից, թե նա արդյոք կապիտալ ունի^c,
թե վոչ, մասնավոր սեփականատերերին ազատություն և
տալիս տնօրինելու հողը, կապիտալը, իսկ ով վոր այդ չու-
նի, տալիս և աշխատող ձեռքերը կապիտալիստին վաճառելու
ազատություն...

...Մենք և այն սոցիալիստները, վորոնք դեռևս չեն գումանանել սոցիալիզմին, միշտ մերկացրել ենք բուրժուական հասարակության սուստը, խարեյությունը և կեղծավորությունը, հասարակության, վորը խոսում և ազատության և հավասարության մասին, ազատության ու հավասարության թեկուղ ընտրությունների ժամանակ, յերբ իրականում կապիտալիստների իշխանությունը, հողի, ֆարբիկաների և գործարանների մասնավոր սեփականությունը վո՞չ թե ազատություն, այլ ճնշում ու խարեյություն և սահմանում աշխատավորների համար ամեն և բոլոր տեսակ «ղեկավարական» ու հանրապետական» կարգերում»¹:

Հակեր Ստալինն ևս մեզ սովորեցրել է.

«Կառուցկու և Ընկ. զրույցներն ընդհանուր հավասարության, «մաքուր» դեմոկրատիայի, «կատարյալ» դեմոկրատիայի մասին և այլն—բուրժուական քողարկումն և այն անտարակուսելի փաստի, վոր շահագործողների և շահագործվողների հավասարությունն անհնարին է»²:

Ահա թե ինչ եր սովորեցնում մեղ լենինը, ինչ ե սովորեցնում մեղ Ստալինը, մերկացնելով բուրժուական դեկլարացիաների սուտն ու կեղծիքը։ Այդ ե մեղ սովորեցնում նաև կոմունիստական կուսակցության ծրագիրը։ Մեր կուսակցության ծրագրում մենք կարող ենք կարգավալ ցայտուն եջեր, վարոնց մեջ բացահայտված են կապիտալիստական կարգերի հակասությունները, սուտն ու կեղծիքը, վորով քողարկվում են այդ հակասությունները։

Մեր խորհրդային սահմանադրությունները, այդ թվում նաև 1936 թվի ստալինյան Սահմանադրությունը, ի տարբերություն բուրժուական սահմանադրություններից, իրենց անկյունաքար են

¹ ს ცნების. მურავილებულები համառուսական VII համագումարը: Տեղապահել-
ման խոսքը համագումարը փակելիս: Եթեկ. չ. XXIV, էջ 626 (առևա.):

² Ստալին. Լենինիզմի հարցերը, ԵՊ 43 (Համբուլոսիստատ) :

1936 թվի Սահմանադրությունը քաղաքացիների հիմնական իրավունքների ու պարտականությունների թվարկումն սկսում է աշխատանքի իրավունքից։ Այդ հիմնական իրավունքը յուրաքանչյուր քաղաքացու համար կարող է ապահովել միայն սոցիալ-պատական յերկիրը։

Նրանից եւ մհնք կսկսենք իրավունքների մեր գեղարացիայի վերլուծությունը:

Աշխատանքի իրավունքը՝ այդ, ինչպես ասում է մեր Սահմանադրության 118-րդ հոդվածը, բոլոր աշխատավորների ազահովված աշխատանք ստանալու իրավունքն է, նրանց աշխատանքը վարձատելով դրա քանակի ու վրակի համապատասխան:

Յեթե ընկեր Ստալինը մատնանշել է, վոր իսկական ազատություն կա այնտեղ, վորտեղ մարդը չի գողում, վոր վաղը կարող է կորցնել աշխատանքը, բնակարանը, հացը, ապա այդ ազատությունն արդեն գոյություն ունի ԽՍՀՄ-ում: ԽՍՀՄ-ում աշխատանքի իրավունքն ամբողջությամբ ապահովվում է ժողովրդական տնտեսության սոցիալիստական կազմակերպմամբ, խորհըրդային յերկրի արտաքրողական ուժերի անշեղ աճմամբ, տնտեսական ձկնաժամկերի բացակայությամբ և գործազրկության վերացմամբ:

«Վորպես արդյունք ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության բնագավառում տեղի ունեցած այդ բոլոր փոփոխությունների՝ այժմ մենք ունենք նոր, սոցիալիստական եկոնոմիկա, վորը չգիտե ճշնաժամեր ու գործադրկություն, չգիտե աղքատություն ու քայլքայում և վորը տալիս ե քաղաքացիներին բոլոր հնարավորություններն ունեոր ու կուտաւրական կյանքի համար»¹:

Մեր հասարակությունը սոցիալիստական հասարակությունն է, վորտեղ չկան շահագործող դասակարգեր, վորտեղ հասարակության տնտեսական հիմք հանդիսանում է զործիքների և արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունը, վորտեղ հասարակության ամբողջ զարդացումը ուղղություն է ստանում ու զարգանում և միասնական պլանով, հոգուտ ամբողջ հասարակության:

1 Սատլիմ. Զեկուցում ԽՍՀ Միության Սահմանադրության Նախագծի ժամանելու օրը՝ VIII Համամիութենական Արտակարգ Համագումարում:



Սոցիալիստական հասարակության մեջ, ասում եր ընկեր Ստալինը,

«Մնաց բանվոր դասակարգը,
Մնաց գյուղացիների դասակարգը,
Մնաց ինտելիգենցիան»:

Սակայն «ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը—այդ՝ մի բոլորովին նոր, շահագործումից ազատագրված բանվոր դասակարգ է, վորի նմանը մարդկության պատմությունը գետ չի խմացել»:

Այնուհետև ընկեր Ստալինն ասում է.—«Մեր խորհրդային գյուղացիությունն իր ճնշող մեծամասնությամբ կոլտնաեսային գյուղացիություն ե» և «Մեր խորհրդային ինտելիգենցիան—այդ՝ միանդամայն նոր ինտելիգենցիա յէ, վորը բոլոր արմատներով կապված է բանվոր դասակարգի ու գյուղացիության հետ»¹:

Այս բոլոր նախառյաշներն ապահովում են կոմունիզմի բարձրագույն փուլի՝ «Յուրաքանչյուրից՝ ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ պահանջների» սկզբունքը կենսագործելու հարավորությունը վոչ հեռու ապագայում:

Ենդեւսն իր ժամանակին Անդլիայի բանվոր դասակարգի դրության մասին այսպես ե գրել.

«... պրոլետարը, վորը բացարձակապես վոչինչ չունի, բայցի իր ձեռքերից, վորն այսոր ուտում է այն, ինչ նա վաստակել եր յերեկ, վորը կախումն ունի ամեն տեսակ պատահականություններից, զրկված է ամեն տեսակ սովահովությունից, թե նա միշտ իլլիցակի կլինի միջոցներ հայթայթելու իր ամենաանհրաժեշտ պահանջմունքները բավարարելու համար,—վորովհետեւ ամեն մի ճշնաժամ, վարպետի ագեն մի քահաճույք կարող է նրան զրկել մի կտոր հացից,—այդ պրոլետարը գտնվում է ամենավրդութեացիչ, ամենաանմարդավայել գրության մեջ, վորպիսին միայն կարել յե պատկերացնել: Սարուկի գոյությունն ապահովված է նրա տիրոջ անձնական ոգուտով. ճորտը, գոնե, մի կտոր հող ունի, վորով նա ապրում է. նրանք յերկուսն ել ապահովված են, առնվազն, սովամահությունից. իսկ պրոլետարը թողնված է բացառապես իր բախտին և միենույն ժամանակ իլլիցակի չե իր ուժերի այնպիսի գործադրություն դրույթու, վորպեսպի կարողանա հույս դնել այդ ուժերի վրա...

1 Ստալին. Զեկուցում ԽՍՀ Միության Սահմանադրության նոխագծի մասին Խորհուրդների VIII համամիութենական Արտակարգ համապատասխան:

Նա կուտակելու հարկ չունի. ամենաշատը, վոր նա կարող ե—այդ այն ե, վոր նա կարող ե կուտակել մի քանի շաբաթ ապրելու համար: Սակայն յերբ նա զրկվում է վաստակից, բանը այլևս մի քանի շաբաթների չե հանդում: Նա իլլիցակի չե յերկար ժամանակվա համար սեփականություն ձարել, իսկ յեթե նրան այդ հաջողվի, նա կդադարի բանվոր լինելուց, և մեկ ուրիշը կրոնի նրա տեղը»¹:

Ենգելսն այսպես է բնութագրում բանվորի դրությունը կապիտալիզմի որով: Այստեղից պարզ ե այն, թե բանվորներն ինչ վերաբերմունք ունենին գեղի աշխատանքը՝ կապիտալիստական հասարակության պայմաններում:

ԽՍՀՄ-ի հասարակական կարգերի բուն եյության մեջ դըրված նախադրյալները միանդամայն այլ վերաբերմունք մշակեցին գեղի աշխատանքը, վորն արտահայտվեց սոցիալիստական մրցության և հարվածայնության լայն ալիքով, նրա բարձրագույն ետապը հանդիսացող ստախանովյան շարժումով, վորն ընդգրկեց Խորհրդային Միության հակայական մասսաներին:

Հիշեցելք ընկեր Ստալինի կլասիկ ձեռակերպումը 1930 թվականին մեր աշխատանքի և այն նշանակության մասին, վոր ունի սոցիալիստական մրցությունը մեզ մոտ.

«Այժմ արդեն կասկած չի կարող լինել, վոր մեր շինարարության ամենակարեռը փաստերից մեկը, յեթե վոչ ամենակարեռը փաստը, տվյալ մօմենտում Փարբիկաների ու գործարանների սոցիալիստական մրցությունն ե, հարյուր հաղարավոր բանվորների մրցականչը մրցության մեջ ձեռքբերված արդյունքների մասին, հարվածայնության լայն զարգացումը: Միայն կույրերը չեն տեսնում, վոր մասսաների հոգեբանության և գեղի աշխատանքն ունեցած նրանց վերաբերմունքի մեջ տեղի յե ունեցել հակայական բեկում, վորն արմատապես փոխել ե մեր գործարանների ու Փարբիկաների գեմքը...

Մրցության մեջ ամենազարմանալին այն ե, վոր նա աշխատանքի նկատմամբ մարդկանց ունեցած հայացքների մեջ արմատական հեղաշրջում ե առաջացնում, վորովհետեւ նա աշխատանքն ամոթալի ու ծանր լծից, վորպիսին նա համարվում եր առաջներում՝ գարձնում ե պատվի գործ, փառքի

1 Անգելս. Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում, Մարք և Անգելս. Հ. III, եջ 408 (ռուս.):

գործ, արիության ու հերոսության գործ։ Կապիտալիստական յերկիրներում չկա և չի կարող լինել նման վոչ մի բան։ Այստեղ, նրանց մոտ, կապիտալիստների մոտ, ամենաբաղձակի գործը, վորը հասարակական հավանությանն է արժանանում, —ունենա ունենալը, տոկոսներով՝ ապրելը, աշխատանքից ազատ լինելն է, աշխատանք, վորն արհամարհելի գրադարձում և համարվում։ Մեղանում, ԽՍՀՄ-ում, ընդհակառակը, ամենաբաղձակի գործը, վորը հասարակական հավանությանն է արժանանում, դառնում է աշխատանքի հերոս լինելու հնարավորությունը, հարվածայնության հերոս լինելու հնարավորությունը, մի հերոս, վորը միլիոնավոր աշխատավորության մեջ ըրջապատված է մեծարանքի լուսապսակով»¹։

Ստախանովականների Համամիութենական առաջին խորհրդակցությանը (1935 թվի նոյեմբերի 17-ին) ունեցած իր յելությում ընկեր Ստալինը մատնանշեց, վոր ստախանովյան շարժումը «իրենից ներկայացնում է աշխատանքի այն բարձր արտադրողականության նմուշը, վորը կարող է տալ միայն սոցիալիզմը», վոր «նա մի ամբողջ շարք դեպքերում դերազանցում է առաջավոր կապիտալիստական յերկիրների աշխատանքի արտադրողականությունից և, այդպիսով, բաց և անում մեր յերկրում սոցիալիզմի հետագա ամրապնդման դորձնական հնարավորությունը» և «սոցիալիզմից կոմունիզմին անցնելու պայմաններ ե պատրաստում»։

Ահա՛ թե մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, սոցիալիստական հասարակության մեջ, ինչպիսի բարձր աստիճանի յև հասցրած աշխատանքի նշանակությունը և ահա՛ թե ինչու սոցիալիստական հասարակության ազատ աշխատողները դրսերում են այն առանձնահատուկ, նոր վերաբերմունքը դեպի աշխատանքը, վորը լենինն անվանում եր կոմունիստական վերաբերմունք։ Ահա թե ինչու Սահմանադրության 118-րդ հոդվածը, վորը խոսում է աշխատանքի իրավունքի մասին, բացառիկ նշանակություն և ստանում։

Վորպեսդի բանվորները, գյուղացիները և նրանց հետ կապված աշխատավորական ինտելեկտուալիստների մեջ Միության մեջ կա-

¹ Ստալին, Կենտրոնական կոմիտեի քաղաքական հաշվեավությունը Համականք(բ)կ ԽVI համագումարին, «Լենինիզմի հարցերը», եջ 490—491, (Հայկուս Հբառ, 1935 թ.)։

րողանային ուեալ կերպով և երոք լինել նոր հասարակության այն աշխատավորները, վորոնց մասին խոսում եր ընկեր Ստալինը, մեր Սահմանադրությամբ աշխատավորներին տրված ենակ հանգստի իրավունք և կրթության իրավունք։ Այդ յերկու հղոր լծակները—հանգստի իրավունքը և կրթության իրավունքը—յուրաքանչյուր աշխատավորի հնարավորություն են տալիս այնքան բարձրացնելու իր ընդհանուր կուտուրական և քաղաքական մակարդակը, վոր մոտեցվի այն մոմենտը, յերբ կանհետանա Փիղիկական և մոտավոր աշխատանքի միջև յեղած հակագրությունը, յերբ կատարվի անցումը գեպի կոմունիստական հասարակության բարձրագույն փուլը։

Հանգստի իրավունքն իրականություն դարձավ միայն մեր յերկրում, այն ժամանակ, յերբ կապիտալի յերկիրներում նա համատարած ծաղը ու կեղծիք է։ Իտալական Փաշիստական սահմանադրության մեջ (15-րդ հոդված) դրված է, վոր աշխատողը մի շաբաթվա արձակուրդի իրավունք ունի։ Սակայն իրականում սոտացվում է հետեւյալը, —տրվում է մի շաբաթվա արձակուրդի իրավունք, սակայն կոլեկտիվ պայմանագիրն այդ իրավունքը վորոշում է ձեռնարկության տեխնիկական պահանջների սահմաներում, իսկ պահանջները վորոշում են կապիտալիստները։ արդյունքը լինում է այն, վոր բանվորների իրավունքը հաճախ Փիկտիվ է։

Հանգստի իրավունքը ուեալ իրավունք է միայն այն ժամանակ, յերբ զուտորդվում է աշխատանքի իրավունքի հետ։ առանց այդ զուտորդության նա միայն խաբեյություն է, վորովհետեւ կապիտալիստական հարաբերություններն այդ իրավունքը կախման մեջ են զնում կապիտալիզմ։ Ընդհակառակն, մեր սահմանադրությունը ուեալ կերպով ամրապնդում է այդ իրավունքը։ Նրա մեջ մենք կարգում ենք.

«Հանգստի իրավունքն ապահովվում է բանվորների ընդուղի մեծամասնության համար այն բանով, վոր աշխատանքային որը կրծատվում—հասցվում է 7 ժամի, բանվորների ու ծառայողների համար սահմանվում է տարեկան արձակուրդ, վորի ընթացքում ողաճանալում է նրանց աշխատավարձը, աշխատավորներին սպասարկելու համար տրամադրությունը և սանատորիաների, հանգստյան տների, ակումբ-

ների լայն ցանց» (119-րդ հոդված)։

Մեզ մոտ այժմ որենքը բանվորության մեծամասնության

համար ապահովում ե 7-ժամյա աշխատանքային որ, որենքն արձակուրդ ե ապահովում՝ աշխատավարձի պահպանմամբ—այս բոլորն իրականություն ե, վորը սահմանել ու նվաճել ե պրոետարական հեղափոխությունը:

Աշխատանքի իրավունքը, հանդսոի իրավունքը և կրթության իրավունքը նպաստում են բանվորի կուլտուրական գործացմանը և նրան զարձնում են սոցիալիստական հասարակության դիտակից կառուցող:

Մրան վերաբերում ե նաև 120-րդ Հոդվածով յերաշխավորված՝ ծերության, ինչպես նաև հիվանդության և աշխատունակությունը կորցնելու գեղքում նյութական ապահովման իրավունքը: Ինչո՞վ կարող ե այս իրավունքն իրավես ապահովվել: Մեղ մոտ այս իրավունքն ապահովվում ե պետության հաշվին բանվորների և ծառայողների սոցիալական ապահովման լայն դարգացումով, ձրի բուժողնությամբ, կուրորտների լայն ցանցըն աշխատավորների ոգտագործմանը տրամադրելով:

Անցնենք կրթության իրավունքին: Աշխատավորության կրթության իրավունքի մասին շատ են գրել մարքսիզմի հիմնադիրները: Մարքսի մոտ ցուցում կա, վորը նա առել ե զեռ 1845 թվին, թե ինչպես պետք ե ապահովել ընդհանուր ուսուցումը: Դեռ այն ժամանակ Մարքսը դնում եր ընդհանուր ուսուցում մտցնելու անհրաժեշտության հարցը:

Լենինը «Աշխատանքի աղատագրություն» խմբի ծրագրի նախագծի վերլուծության մեջ առաջադրում ե ընդհանուր, ձրի և պարտադիր կրթության պահանջը:

Մեր կուսակցության ծրագրի մեջ գրված ե յերկու սեռերի անձերի համար ընդհանուր քաղաքական և տեխնիկական ձրի ուսուցում մտցնելու պահանջը:

Կար ժամանակ, յերբ մենք միայն դնում ենինք այդ խնդիրը, իսկ այժմ Մահմանագրությունը գրի յէ առել այն, ինչ մենք ունենք: 121-րդ Հոդվածն ասում է.

«ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն կրթության իրավունք: Այդ իրավունքն ապահովվում ե ընդհանուր-պարտադիր տարրական կրթությամբ, ձրի կրթությամբ՝ ներառյալ բարձրագույն կրթությունը, բարձրագույն գպրոցում սովորողների հնչող մեծամասնությանը տրվող պետական թոշակների սիստեմով, դպրոցներում մայրենի լեզվով ուսուցանելով, դորժարաններում, խորհունտեսություններում՝ մեքենատրակտորային կայաններում և կոլտնտեսություններում աշխատավորության արտադրական, տեխնիկական և ագրոնոմիկական ձրի ուսուցման կազմակերպումը վիթխարի չափեր և ընդունել:

Քենատրակտորային կայաններում ու կոլտնտեսություններում աշխատավորների համար ձրի արտադրական, տեխնիկական ու ագրոնոմիկական ուսուցում կազմակերպելով»:

Յեվ իսկապես, ԽՍՀՄ-ում կրթության բոլոր աստիճանների ձրի լինելը փաստ ե դարձել: Պետական թոշակների սիստեմը, բարձրագույն գպրոցում սովորողների հնչող մեծամասնության համար, լայնորեն տարածված է: Դպրոցներում մայրենի լեզվով սովորեցնելը համատրած է դարձել: Գործարաններում, խորհունտեսություններում, մեքենատրակտորային կայաններում և կոլտնտեսություններում աշխատավորության արտադրական, տեխնիկական և ագրոնոմիկական ձրի ուսուցման կազմակերպումը վիթխարի չափեր և ընդունել:

ՀամԿ(բ)Կ կենակոմի ղեկտեմբերելյան (1935 թվի) պլենումը տեխնիկական ուսուցման հարցի վերաբերյալ վորոշում ընդունեց այն մասին, վորպեսզի «սիստեմատիկաբար ընդլայնվի տեխնիկական մինիմումի պարտադիր ուսուցման յենթակա բանվորների ու բանվորուհիների ըրջանը» և «տեխնիկական մինիմումի ուսուցումը ընդհանուր ու պարտադիր դարձվի բոլոր բանվորների և բանվորուհիների համար, այդ կարևորագույն գործը յենթարկելով բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակը ինժեներա-տեխնիկական աշխատանքի աշխատողների մակարդակին բին բարձրացնելու խնդրին»:

Այդ վորոշման հիման վրա յուրաքանչյուր գերատեսչության կոնկրետ առաջադրանք տրվեց՝ 1936 և 1937 թվերի ընթացքում տեխնիկական ուսուցմամբ ընդգրկել բանվոր դասակարգի լայն շերտեր և տեխնիմումի բովանդակությունը վերանայել՝ համապատասխան ստախանովյան շարժման առաջածած նոր հնարավորություններին:

Միայն ԽՍՀՄ-ում, հաղթանակած սոցիալիզմի յերկրում, հնարավոր և այնպիսի համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող ինդրի դրումը, վորը տանում ե զեսպի այն, վորյուրաքանչյուր բանվորի գիտելիքները ինժեներա-տեխնիկական աշխատանքի աշխատողների գիտելիքների մակարդակին հասցվեն:

Ահա թե ինչու կրթության իրավունքի վերաբերյալ 121-րդ Հոդվածը այնքան կարևոր և սոցիալիստական հասարակության աշխատավորների համար:

Սակայն սոցիալիստական հասարակության աշխատավորնե-

բը—բանվորները, դյուղացիները, ինտելիգենցիան—միաժամանակ հանդիսանում են նաև նոր հասարակության, նոր կարգերի ակտիվ կառուցաներ և պետական կյանքի ակտիվ մասնակիցներ։ Դրա համար ել քաղաքացու հիմնական իրավունքներին վերաբերող Հ գլուխը վորոշում և նրանց իրավունքները վորպես պետական կյանքի ակտիվ մասնակիցների։

Բացի վերեւում մեր կողմից թվարկված իրավունքներից, ԽՍՀՄ-ի ստալինյան Սահմանադրությունը սահմանում և ևս յերկու հիմնական սկզբունքներ, վորոնք բնութագրում են մեր խորհրդային կարգերը—այդ, առաջին, կանանց իրավահայլասարությունն եւ, յերկրորդ, ԽՍՀՄ-ում յեղած բոլոր ազգությունների իրավահայլասարությունը։

Կանանց իրավահայլասարությունը և ազգությունների իրավահայլասարությունը կարենրազույն պայմաններ են հանդիսանում, վորպեսզի հնարավոր լինի իրականացնել և կենսագործել աշխատավորության իրական հայլասարությունը։

Ահա թե ինչ եր ասում Լենինը կանանց իրավահայլասարության մասին։

«...մարդկային ցեղի կանացի կեսը կապիտալիզմի որով կրկնակի ճնշված է։ Բանվորուհին ու դեղջկուհին ճնշված են կապիտալիզմի կողմից և դրանից բացի՝ նրանք բուրժուական հանրապետություններից նույնիսկ ամենաղեծության կանունների մեջ մնում են, նախ, վոչ-լիբրավ, քանի վոր որենքը նրանց տղամարդու հետ հավասարություն չի տալիս, յերկրորդ, —և այս դվիսավորն ե—նրանք մնում են «տնային ստրկության մեջ», «տնային ստրկուհիներ», ճընշված լինելով խոհանոցի և առհասարակ տնային-ընտանեկան միայնակ տնտեսության ամենամանր, ամենասև, ամենածանր, մարդուն ամենից ավելի բթացնող աշխատանքով։

Բոլենիկյան, խորհրդային հեղափոխությունը կանանց ճնշման ու անհավասարության արժատներն այնպես խորն և կտրում, ինչպես չի հանդինել կտրելու և վո՛չ մի կուռակցություն, և վո՛չ մի հեղափոխություն աշխարհում։ Մեղանում, Խորհրդային Ռուսաստանում, ըստ որենքի կնոջ ու տղամարդու անհավասարությունից հետք անդամ չի մնացել։ Առանձնապես նողկալի, ստոր, կեղծավոր անհավասարությունը ամուսնական և ընտանեկան իրավունքի ասպարե-

զում, անհավասարությունը յերեխայի վերաբերմամբ՝ խորհրդային իշխանությունը լիովին վոհնչացրել է։

Այդ միայն առաջին քայլն ե դեպի կնոջ ազատադրումը։ Բայց բուրժուական, թեկուզ և ամենից ավելի գեմոկրատիկ, հանրապետություններից և վո՛չ մեկը չհամարձակվեց մինչև անգամ այդ առաջին քայլն անել։ Զհամարձակվեց «սրբազն մասնավոր սեփականության» յերկյուղից։

Յերկրորդ ու գլխավոր քայլը հողերի, Փարբեկանների, գործարանների մասնավոր սեփականության վերացումն է։ Սրանով և միայն սրանով ե ճանապարհ բացվում կնոջ լիակատար և իրական ազատադրության համար, նրա ազատագրության համար «տնային ստրկությունից», վոր իրականանալու յե մանր միայնակ տնային տնտեսությունից խոչոր հանրայնացվութիւն անցնելու միջոցով»¹։

Ահա՛ թե ինչու Սահմանադրության 122-րդ հոդվածն ասում է.

«Կնոջը ԽՍՀՄ-ում տղամարդուն հավասար իրավունքներ են տրվում տնտեսական, պետական, կուլտուրական ու հասարական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում։

Կանանց այս իրավունքների իրականացման համարական արդիությունն ապահովվում և կնոջը տղամարդուն հավասար իրավունք տալով աշխատանքի, աշխատանքի վարձատրության, հանգստի, սոցիալական ապահովագրության ու կրթության ասպարեզում, մոր ու մանկան շահերի պետական պաշտպանությամբ, կնոջը հղության ժամանակ արձակուրդ տալով՝ պահպանելով նրա աշխատավարձը, ծննդատների, մանկամասուրների ու մանկապարտեզների լայն ցանցով»։

Այս այն է, ինչ արդեն կա, նվաճված ու իրացված և ԽՍՀՄի ությունում, վորտեղ կինն արդեն իրավահայլասար և գարձել տղամարդու հետ տնտեսական, պետական, կուլտուրական և հասարակական-քաղաքական աշխատանքի բոլոր ասպարեզներում և վորտեղ, բացի դրանից, առանձնապես պաշտպանվում են կնոջ, վորպես մոր ու ամուսնու, շահերը։ Արորտի արգելման, ծննդականներին ցույց տրվող նյութական ոգնությունն ավելացնելու և այլին մասին վերջերս հրապարակված որենքն առաջ մզեց մանկամասուրների և մանկապարտեզների ցանցի կազմակերպությունը ամուսնական և ընտանեկան իրավունքի ասպարե-

¹ Լենին, «Բանվորուհիների միջազդային որը», Յերկ. Հ. Ա. ԽՎ, էջ 273—274 (Հայկուհարատ)։

ՏԵ՛Ր : Միւլոններով՝ գումարներ են բաց թողնված, ի լրացումն մանկական հիմնարկների համար այս տարի արված հատկացումների, վորպեսզի կինը կարողանա ոգտվել իր իրավունքներից: Կահայք մարդկային ցեղի կեսն են կազմում: Լենինը կոչ էր անում պայքարել այն բանի համար, վորպեսզի կանայք ակտիվորեն մասնակցեն պետական աշխատանքին: Մոսկվայի խորհրդի ընտրական ժողովներից մեկում լենինն ասում եր.

«Մեզ պետք է, վոր բանվորուհի-կինը վո՞չ միայն որենքով, այլև կյանքում հավասար լինի տղամարդ-աշխատողի հետ: Դրա համար հարկավոր է, վորպեսզի բանվորուհի-կանայք ավելի ու ավելի շատ մասնակցություն ունենան հասարակական ձեռնարկությունների կառավարմանը և պետության կառավարմանը:

Կառավարելով՝ կանայք արագ կսովորեն և կհասնեն տղամարդկանց»¹:

Այս, ինչ վոր տեղի ունի մեզ մոտ—աշխատանքի բնագավառում, ստախանովյան շարժման բնադավառում, կանանց հանդես բերած հերոսության այս բոլոր որինակները, ամբողջ աշխարհին հայտնի մեր կին-հերոսուհիների այդ խոչըն անուններն արգեն ցույց տվին, թե վորքան շատ և առաջ զնացել մեր խորհրդային կինը, վորքան շատ բան ենք արել մենք—թեն դեռ վոչ բոլորը—վորպեսզի բոլոր կանանց բարձրացնենք այդ հերոսուհիների, սոցիալիստական հայրենիքի հայրենասիրուհիների մակարդակին:

Ահա թե ինչու Սահմանադրությունն այնքան մեծ ուշադրություն է հատկացնում այս խնդրին, 122-րդ հոդվածում հստակ կերպով խոսելով կանանց իրավահամարության մասին:

Ստալինյան Սահմանադրության 123-րդ հոդվածում խոսվում է քաղաքացիների իրավահամարության մասին, անկախ աղությունից ու ուսացից, տնտեսական, պետական, կուլտուրական և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ասպարեզներում:

123-րդ հոդվածն ասում է.

«ԽՍՀՄ-ի քաղաքացիների իրավահամարությունը տնտեսական, պետական, կուլտուրական ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնադավառներում, անկախ նրանց

ազդությունից ու ասսայից, անխախտ որենք է:

Իրավունքների վորեկից ուղղակի կամ անուղղակի սահմանափակումը, կամ ընդհակառակը, ուսայական ու աղությին պատկանելությունից յենելով՝ քաղաքացիների համար ուղղակի կամ անուղղակի առավելություններ սահմանելը, ինչպես նաև ուսայական ու աղությին բացառիկության կամ ատելության ու արհամարհանքի ամեն տեսակ քարող—պատժվում են որևնքով»:

Մեր յերկիրը ցարիզմից ժառանգություն և ստացել շատ ժողովուրդների գարավոր հետամնացությունը: Յել միայն բանվոր գասակարգի գիլտատուրան կարողացավ աղահովել բոլոր քաղաքացիների իրական հավասարության հաստատմը, անկախ աղջային և ուսայական պատկանելությունից: Ահա թե ինչու դեռևս 1917 թվի նոյեմբերի 15-ին (2-ին) ընդունվեց Թուսատանի ժողովուրդների իրավունքների գելլարացիան, վորը հընչակեց յուրաքանչյուր ժողովրդի ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչեւ անջատումը և պետական ինքնուրույն գոյությունը:

Խորհուրդների III համառուսաստանյան համագումարը, 1918 թվի հունվարին, իր ընդունած «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների գելլարացիայի» մեջ ամբազնդեց աղջերի՝ պետական ինքնուրույն գոյության իրավունքը և հոչակեց, վոր «Խորհրդային Ռուսաստանի հանրապետությունը հիմնվում է աղատ աղջերի աղատ միության հիման վրա, վորպես խորհրդային աղջային հանրապետությունների Փետերացիա»:

Լենինն ասում եր.

«Բանվորական դեմոկրատիայի աղջային ծրագիրն է,— վո՞չ մի անդայմանական արտօնություն վո՞չ մի աղջի, վո՞չ մի լեզվի. աղջերի քաղաքական ինքնորոշման, այսինքն նրանց պետական անջատման հարցի լուծումը լիովին աղատ, զեմոկրատական յեղանակով. հրատարակել համապետական որենք, վորի ուժով աղջորինի և անիրական և հայտարարվում ամեն մի միջոցառում (զեմստվային, քաղաքային, համայնական և այլն, և այլն), վորը վորեկ բանով արտօնություն և տալիս աղջերից մեկին, խախտում և աղջերի իրավահամարությունը կամ աղջային փոքրամասնության իրավունքները—և պետության յուրաքանչյուր քաղաքացին իրավունքունի պահանջելու այդպիսի միջոցառման վերացումը, վորպես հակասահմանադրական, ու քրեական պա-

1 Լենին. Կին-բանվորուհիներին, Յերկ. հ. XXV, էջ 40 (ռուս.):

տիժ նրան, ով այդ միջոցառումը սկսի կիրառել կյանքսւմ»¹: Ենինի այս խոսքերը կոնկրետացվում են Սահմանադրության 123-րդ հոդվածում, Սահմանադրություն, վորն որենքով պատժում և վորհե ուղղակի կամ անուղղակի առավելությանների սահմանումը՝ նայած ազգային պատկանելությանը, ինչպես նաև ամեն մի ազգային բացառիկության, առելության կամ արհամարհանքի արտահայտությունը:

Այս մասին դրված ե 1918 թվի Սահմանադրության մեջ, 1924 թվի Սահմանադրության մեջ և այդ մասին հատկապես խոսում ե 1936 թվի Սահմանադրության 123-րդ հոդվածը:

Իսկ ահա Փաշխտական որենքի մեջ, վորն ընդունված ե սայստագի կողմից 1935 թվին Հիտլերի գեկուցման առթիվ, առված ե.

«1. Քաղաքացի հանդիսանում ե միայն գերմանական կամ սասայորեն ազգացական արյուն ունեցող հպատակը:

«3. Քաղաքացին հանդիսանում է բոլոր քաղաքական իրավունքների միակ կրողը՝ դոյություն ունեցող որենքների շրջանակներում»:

Այսպիսով, ըստ այդ որենքի վոչ արիացի-գերմանացիները կազմաքացիներ չեն, նրանք հպատակներ են, շահագործման որյեկտ և սահմանափակ իրավունքներ ունեն: Ել ավելի վայրենի ու անհեթեթ են այն որենքները, վորոնք ծանր պատճի սպառնալիքով արգելում են գերմանացիների ու հրեաների ամուսնություն ըկամ արտամուսնական կապերը:

1933 թվի ապրիլի 7-ի որենքի մեջ ասված ե.

«Ոչ-արիական ծագում ունեցող աստիճանավորները յենթակա յեն արձակվելու. վորքան վոր բանը վերաբերում ե պատվավոր պաշտոնատար անձերի, նրանք պետք ե արձակվեն դրաված պաշտոնից» (§ 3):

Ահա! թե Փաշխտական ինչպես են որենքով ամբապնդել ուստայական ազգային բացառիկությունը, ոստայական ատելությունն ու արհամարհանքը: Այն, ինչը մեղ մոտ քրեական հանցագործություն ե—այնուղ նորմա յե, որենք: Այն, ինչը մենք անարդանքի սյունին ենք վամում—նրանք առաջ են քաշում վորպես իրենց պետական սիստեմի կառուցման սկզբունք:

1 Լենին.—Լիբերալները ե գեմոկրատաները լեզուների հարցերում: Յերկու համարական բարեկարգությունը:

Բավական ե մեր 123-րդ հոդվածը հակադրել այդ, իմ կողմից մեջբերված, Փաշխտական որենքներին, վորպեսզի տեսնենք այն վիթխարի անդունդը, վորը պրոլետարական դեմոկրատիան, սոցիալիստական կարգը բաժանում ե այն գաղանությունից ու խելաչեղությունից, վորոնք թագավորում են Փաշխտական պետության մեջ: Մենք պարծենում ենք նրանով, վոր

«... մենք ունենք այժմ միանգամայն կազմակորպած երազություններին դիմացած բարձրագույն սոցիալիստական պետություն, վորի ամրությանը կարող եր նախանձել ամեն մի ազգային պետություն աշխարհի ամեն մի մասում»²:

Զերծ մեղ մոտ և վո՛չ մի ձևով ազգային բացառիկություն և սահմանափակումներ:

Մեր յերկրում

«... արմատապես փոխվեց ԽՍՀՄ-ի ժողովուրդների կերպարանքը, անհետացավ նրանց միջից փոխադարձ անվասհության զդացմունքը, զարդացավ նրանց մեջ փոխադարձ բարեկամության զդացմունքը և այդպիսով կարգավորվեց ժողովուրդների խկական յեղբայրական համագործակցությունը միասնական միութենական պետության սխեմում»²:

Հսկայական նշանակություն ունի 124-րդ հոդվածը, վորը վերաբերում ե խոհճի ազտառությանը: Այդ հոդվածի մեջ ասված:

«Քաղաքացիների համար խոհճի ազտառություն ապահովելու նպատակով յեկեղեցին ԽՍՀՄ-ում բաժանված ե պետությունից և դպրոցը յեկեղեցուց: Կրօնական պաշտամունքների կատարման ազտառությունը և հակակրօնական պրոպագանդայի ազտառությունը ճանաչվում ե բոլոր քաղաքացիների համար»:

Ի՞նչ ե նշանակում այս հոդվածը:

Յեկեղեցին միշտ ել յեկել ե շահագործման ամենից հզոր զենքերից մեկը, լայն մասսաներին թմրեցնելու և միենույն ժամանակ հոգեոր ու աշխարհական տերերի արտոնություններն ամրապնդելու ամենից հզոր միջոցներից մեկը:

1 Ստալին. Զեկուցում ԽՍՀ Միության Սահմանադրության նախագծի մասին Խորհուրդների VIII համամիութենական Արտակարգ համագումարում:

2 Նույն տեղը:

Մարքսն ու Ենդելսը բազմիցս դրել են յեկեղեցու դերի մասին, վորը նա խաղացել է դարերի բնաթագում։ Յեղել և մի ժամանակ, յերբ բուրժուազիան, իշխանության համար պայքարելով, կոփի և բարձրացրել հոգեոր տերերի արտօնությունների դեմ և խղճի ազատություն և հաստատել, այսինքն յուրաքանչյուրի համար ազատություն՝ հավատալու այնպես, ինչպես նրան ամենից ավելի հարմար և թվում։ Այդ հանդամանքը հսկայական դեր է խաղացել մարդկությանը միջնադարյան նախապաշտունքներից ազատազրելու համար մզլող պայքարում։ Սակայն, բուրժուական կառավարությունը դրա հետ մեկտեղ հասկանում եր յեկեղեցու դերը և մեծ դումարներ եր հատկացնում (բացահայտ կամ թագցրած ձեռվ) յեկեղեցուն, վորպես շահագործման ամրապնդման դործիքի, ոժանդակելու համար։ Կապիտալիստները հիմնալի կերպով դիտակցում ելին, վոր այդ փողերի համար յեկեղեցին բանվորներին կներշնչեր հնադանդություն և հավատ դեպի կապիտալիստական սեփականության անսասանությունը։

Ընկեր Ստալինը այսպես է խոսել կրոնի նկատմամբ կոմունիստական կուսակցության ունեցած վերաբերմունքի մասին։

«Այդ նշանակո՞ւմ է արդյոք, վոր կուսակցությունը կրոնի նկատմամբ չեղոք է։ Վո՞չ, չի նշանակում։ Մենք պրոպագանդա յենք մզում ու պրոպագանդա յենք մզելու կրոնական նախապաշտամունքների դեմ։ Յերկրի որենսդրությունն այնպես է, վոր ամեն մի քաղաքացի իրավունք ունի զավանելու ցանկացած կրոնը։ Դա յուրաքանչյուրի խղճի դորձն է։ Հենց այս պատճառով է, վոր մենք կիրառել ենք յեկեղեցու բաժանումը պետությունից։ Բայց, կիրառելով յեկեղեցու բաժանումը պետությունից ու դավանանքի ազատություն հռչակելով՝ մենք դրա հետ մեկտեղ յուրաքանչյուր քաղաքացու իրավունք ենք վերապահել համոզելու միջոցով, պրոպագանդայի ու ադիտացիայի միջոցով պայքարելու այս կամ այն կրոնի դեմ, ամեն մի կրոնի դեմ։ Կուսակցությունը չի կարող չեղոք լինել կրոնի նկատմամբ, և նա հակարոնական պրոպագանդա յե մզում բոլոր ու ամեն տեսակ կրոնան նախապաշտամունքների դեմ, վորովհետեւ նա դիտության և կողմնակից, իսկ կրոնական նախապաշտամունքները դիտության դեմ են դնում, վորովհետեւ յուրաքանչյուր կրոն

դիտությանը հակադիր մի բան է։ Կուսակցությունը չի կարող չեղոք լինել կրոնական նախապաշտամունքների նկատմամբ և պրոպագանդա յե մզելու այդ նախապաշտամունքների դեմ, վորովհետեւ դա շահագործող դասակարգերին աջակցող և այդ դասակարգերի նկատմամբ հնագանդություն քարոզող հետագեմ, հոգեորականության աղղեցությունը խախտելու միջանքերից մեկն է։ Կուսակցությունը չի կարող չեղոք լինել կրոնական նախապաշտամունքներ կրողների նկատմամբ, աշխատավոր մասսաների գիտակցությունը թունավորող հետագեմ հոգեորականության նկատմամբ»¹։ Մեր որենքը հենց սկզբից—1918 թվի Սահմանադրության մեջ—յեկեղեցուն զրկեց ամեն տեսակ արտօնություններից։ Խորհրդային կառավարությունը վո՞չ միջոց բաց չի թողնում յեկեղեցու պահպանման համար։ Դրա հետ մեկտեղ մենք հասկանում ենք, վոր հավատացյալների նկատմամբ բոնությամբ վո՞չ մի բանի չես հասնի։ Այստեղ պետք է բարձրացնել աշխատավոր մասսաների գիտելիքների մակարդակը, մերկացնել կրոնական խարեյությունը։ Դրա համար ել Սահմանադրությունը թույլ է տալիս կրոնական պաշտամունքների ազատ կատարումը, բայց միաժամանակ խրախուսում է հակարոնական պրոպագանդայի պատառությունը։

Իսկ ի՞նչ բան է զպրոցի բաժանումը յեկեղեցուց։ Այդ—կրոնի արտաքսումն է զպրոցից, յերեխաներին կրոնով թմբեցնելու արգելումը։ Դրա համար ել մեր զպրոցներում կրոնի զասավանդումը վերացած է։

Այն բոլորն, ինչ վոր ասված է կանանց իրավահավասարության մասին, ազգությունների իրավահավասարության մասին, յեկեղեցին պետությունից բաժանելու մասին, զպրոցը յեկեղեցուց բաժանելու մասին վո՞չ միայն ապահովում են բոլոր քաղաքացիներին՝ նրանց իրավունքները, այլև իսկական դեմոկրատական պետական կառուցվածքի համար անհրաժեշտ պայմաններ են։ Առանց կանանց իրավահավասարության, ազգությունների իրավահավասարության, տառանց յեկեղեցին պետությունից բաժանելու—չկա իսկական դեմոկրատիա։

125-րդ հոդվածը թվարկում է այն քաղաքական իրավունք-

1 Ստալին։ Զբոյց ամերիկյան առաջին բանվորական պատմերակության ձևու։ «Լենինիզմի հարցեր», եջ 246 (Հայկուսհրատ, 1935 թ.)։

ները, վոր մեր Խորհրդային պետությունը տալիս և բոլոր քաղաքացիներին՝ պետական կյանքում և պետական կառավարմանը մասնակցելու համար:

Ահա այդ իրավունքները.

«Եշխատավորների շահերին համապատասխան և սոցիալիստական կարգերն ամրացնելու նպատակով ԽՍՀՄ-ի քաղաքացիների համար որենքով ազահովում է:

ա) խոսքի ազատություն,

բ) մամուլի ազատություն,

տ) ժողովների և միտինդների ազատություն,

դ) փողոցային յերթերի ու ցուցերի ակտատություն:

Քաղաքացիների այդ իրավունքներն ապահովում են՝ աշխատավորներին և նրանց կազմակերպություններին տրամադրելով տպարաններ, թղթի պաշարներ, հասարակական շենքեր, փողոցներ, կամի միջոցներ և աշխատավորների այդ իրավունքներն իրականացնելու համար անհրաժեշտ այլ նյութական պայմաններ»:

Ի՞նչն է կարեռը Սահմանադրության այս հոդվածում:

Իրավունքը հայտարարված է և հնարավորություն և տըրված ռդատագործելու այդ իրավունքը—ահա թե ինչն է կարեռը։ Մամուլի ազատությունն ողտագործելու համար պետք է ունենալ տպարաններ, թուղթ, իսկ տպարանները կապիտալիստական յերկիրներում բուրժուազիայի ձեռքումն են։ Ժողովների ազտառությունն ողտագործելու համար պետք է ունենալ շենքեր, իսկ այդ շենքերը կապիտալիստաների ձեռքումն են։

Ահա! թե ինչ ճանապարհներով կապիտալիստական պետության մեջ պրակտիկայում վոչչացվում են դեմոկրատական ազատությունները, վորոնք միայն խոսքով են ճանաչվում։ Ահա! թե ինչու լենինը մատնանշում եր այն, վոր բուրժուական պետություններում այդ իրավունքներն ու ազատություններն անմատչելի յեն աշխատավորության հսկայական մեծամասնությանը, վորովհետև կապիտալիստներն ու կարվածատերներն իրենց ձեռքում են պահում բոլոր շենքերի, թղթի և այլնի իննը տասներորդը, իսկ բանվորներն այդ չունեն։

Վորպեսդի աշխատավորները հնարավորություն ունենան ողտագործելու այդ իրավունքները, 1936 թվի Սահմանադրությունը այդ հնարավորությունն ապահովում է այն բանվական պահումներ, շենքեր, փողոցներ, կամի միջոցներ և

վրանք իրականացնելու համար անհրաժեշտ նյութական այլ պայմաններ և տրամադրում աշխատավորներին։ Այս բոլորը հնարավոր յեղավագի միայն բանվորների ու դյուզացիների սոցիալիստական պետության մեջ։

Բոլոր բուրժուական սահմանադրություններն ասում են,— յուրաքանչյուր վոք կարող և արտահայտել իր կարծիքը, վորքան վոր այդ չի խախտում որենքը։ Դա ձեւական բնորոշում է։ Այսպես են գրում կապիտալիստները, վորոնցից և կախված, թե ինչ պիտի գրվի որենքների մեջ։ Այդ ձեւական բնորոշումների փոխարեն մեր Սահմանադրությունը հարցը դնում է այլ կերպ և ուղղակի ասում է, վոր յուրաքանչյուր քաղաքացու համար թույլ և տալիս և ապահովում է խոսքի ազատություն, մամուլի ազատություն և ուսականություն և ուսակավորություններ են ընձեռնում ոգտվելու դրանցից՝ սոցիալիստական կարգերն ամրապնդելու նպատակով։

Այս իրավունքներն ու յերաշխիքները չեն տարածվում ժողովրդի թշնամիների վրա։ Մենք պետք ե հիշենք, վոր սուր գառակարգային կոիվը շարունակվում է։ Զախջախված շահագործող գառակարգերի մնացորդները դեռ վերջնականապես չեն վոչչացված։ Սոցիալիզմի լիակատար կառուցման գործում մեր առաջընթացին զուրընթաց դասակարգային թշնամիների դատապարտված բեկորները կատաղեն և բոլոր միջոցներով վատություն կանեն, կիսասեն սոցիալիզմի յերկին։

«Գետք և նկատի ունենալ,—ասում ե ընկեր Ստալինը, վոր ջախջախված դասակարգերի մնացորդները ԽՍՀՄ-ում միայնակ չեն։ Նրանք ունեն ԽՍՀՄ-ի սահմաններից դուրս դժուդի մեր թշնամիների ուղղակի ունակությունը։ Ոխալ կլիներ կարծել, թե դասակարգային պայքարի վոլորտը սահմանակալված է ԽՍՀՄ-ի սահմաններով։ Յեթե դասակարգային պայքարի մի ծայրը գործում է ԽՍՀՄ-ի շրջանակներում, ապա նրա մյուս ծայրը ձգվում է գեղվի մեղ շրջապատզ բուրժուական պետությունների սահմանները։ Այդ չեն կարող չգիտենալ ջախջախված դասակարգերի մնացորդները։ Յեթ չենց այն պատճառով, վոր նրանք գիտեն այդ, նրանք այսուհետեւ ել շարունակելու յեն իրենց կատաղի վատնձգությունները»¹։

1 Ստալին. Զեկուցում ՀամԿ(բ)կ կենտրոնի պլենումում 1937 թվի մարտի 3-ին։

Դրա համար ել մենք յերբեք թույլ չենք տա, վոր ժողովրդի
թշնամիներն իրենց թշնամական նպատակների համար ոգտա-
զործեն ապարանները, թուղթը, ժողովների ազատությունը:
Պետք ե զգաստ լինել:

Անցնում ենք 127-րդ, 128-րդ և 129-րդ հոդվածներին, վո-
րոնք խոսում են ԽՍՀՄ-ի քաղաքացիների անձի, բնակարանի,
նամակագրության անձեռնմխելության մասին:

Անձի անձեռնմխելությունն որենքով յուրաքանչյուր քաղա-
քացու համար ապահովում ե նրա անձնական ազատությունը.
միայն պրոլետարական դատարանը կամ դատավայրը, սոցիալիս-
տական կարգերի պաշտպանության նպատակներով, մյուս քա-
ղաքացիներին պաշտպանելու նպատակներով իրավունք ունեն
ավյալ անձնավորությանը ձերբակալելու կարգադրություն ա-
նելու:

Որենքը ԽՍՀՄ-ում յերաշխավորում ե ԽՍՀՄ-ի քաղաքացի-
ներից յուրաքանչյուրի բնակարանի անձեռնմխելությունը վորեն
մեկն ներխուժումից, բացի այն դեպքերից, յերբ այդ պահան-
ջում ե պետական անվտանգությունը:

Կապիտալիստական յերկիրներում, որինակ, Անդրիայում,
գոյություն ունի անձի անձեռնմխելության պաշտպանության
որենք: Բայ այդ որենքի ձերբակալության ծառությունն ստուդ-
վում ե դատարանով: Սակայն բուրժուական դատարանի յերաշ-
խիքն իսկական յերաշխիք չէ, վորովհետեւ բուրժուական դատա-
րանը դատակարգային դատարան ե, վորը պաշտպանում ե միայն
շահագործողների շահերը:

Մեր խորհրդային դատարանն աշխատավորների դատարան-
ե: Այն հարցը, արդյոք պետական անվտանգության շահերին հա-
մապատասխանում ե, թե չի համապատասխանում այն, վոր այս
կամ այն քաղաքացին ձերբակալման յենթարկվի և դատի տըր-
վի, —վճռելու յեն ընտրովի ժողովրդական դատարանը կամ դա-
տախազը: Այդ աշխատավորների իրավունքների ունալ ապահո-
վումն ե:

Սահմանադրության IX դիմում մատնանջում կա այն մասին,
վոր մեղ մոտ յուրաքանչյուր մեղադրյալ սպաշտպանության իրա-
վունք ունի: Պաշտպանության իրավունքը նույնպես ԽՍՀՄ-ի
քաղաքացիների սահմանադրական իրավունքներից մեկն ե: Նա
գոյություն ունի և մյուս յերկիրներում: Բայց ահա թե Ենդելս-
ինչ ե ասել Անդրիայում գոյություն ունեցող պաշտպանության
իրավունքի մասին.

«Ամեն տեսակ պաշտպանություն դառնում ե նրա գեմ,
ում ցանկանում ե պաշտպանել, —որենքը ցանկանում ե
պաշտպանել հասարակությանը և վնաս ե հասցնում նրան,
վորովհետեւ պարզ ե, վոր յուրաքանչյուր վոք, ով չափա-
զանց աղքատ ե պաշտոնական պատրվակագործին նման
պատրվակագործ-պաշտպան հակագրելու համար, իր զեմ
կունենա այն բոլոր ձեռքը, վորոնք ստեղծված են յեղել իր
պաշտպանության համար: Ով չափազանց աղքատ ե պաշտ-
պան կամ բավականաշափ վկաներ բերելու համար, կորած
ե, յեթե նրա գործը վորեւ չափով կասկածելի յե»:

Մեր դատական սիստեմն այլ կերպ ե դնում հարցը, աշխա-
տավորներին ապահովելով, անհրաժեշտության գեպօւմ, ձրի
պաշտպանություն կամ թե, համենայն դեպս, բոլորի համար
մատչելի պաշտպանություն, վոր կատարելու յեն նույն աշխա-
տավոր մասսաների ներկայացուցիչները:

Ստալինյան Սահմանադրությունը մեղ մոտ ապաստարանի
իրավունք ե տալիս ստարերկրյա քաղաքացիներին, յեթե նրանց
արտասահմանում հալածում են աշխատավորների շահերը պաշտ-
պանելու համար կամ յեթե նրանք այնտեղ գիտական գործունե-
յություն ունեն, վորը չի համապատասխանում շահագործող դա-
սակարգի շահերին, կամ թե աղդային-ապատադրական պայքար
են մղում, կամ թե պետք ե փախչեն թշնամիների հետապնդու-
մից: Այդ բոլոր քաղաքացիների համար մենք բաց ենք անում
զոները և ապաստարանի իրավունք ենք ապահովում, սակայն
վերապահություն ենք անում, վոր ապաստարանի իրավունք տա-
լիս ենք միայն նրանց, ովքեր հալածվում են աշխատավորության
շահերը պաշտպանելու համար:

Այդպես ե ասում 129-րդ հոդվածը:

Հաջորդ հոդվածները խոսում են ԽՍՀՄ-ի քաղաքացիների
պարտականությունների մասին: Յեթե բոլոր նախորդ հոդված-
ները խոսում ենին այն մասին, ինչ վոր հասարակությունն ե ա-
պահովում յուրաքանչյուրի համար, ապա այս հոդվածները խո-
սում են այն մասին, թե սոցիալիստական հասարակությունն ինչ
ե պահանջում յուրաքանչյուր քաղաքացուց:

Դրանք բոլորը սերտորեն կապված են միմյանց հետ:

Ահա 130-րդ հոդվածը.

1 Մարքս և Էնգելս. Անդրիայի գրությունը—Անդրիական սահմանադրու-
թյունը. Յերկ. հ. Ա. էջ 385 (առաւ.):

«ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր ե պահ-պահնել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություննե-րի Միության Սահմանադրությունը, կատարել որենքները, աշխատանքի կարգապահություն պահպանել, ազնվորեն վե-րաբերվել հասարակական պարտքին, հարդել սոցիալիստա-կան համակեցության կանոնները»:

Պահպանել աշխատանքի կարգապահությունը—այդ նշանակում ե ազնվորեն վերաբերվել պարտականություններին, աշխա-տել ընդհանուրի ոգտի համար: Ազնվորեն վերաբերվել հասարա-կական պարտքին—այդ նշանակում ե չլինել լողը, հասկանալ, վոր գու ստեղծագործ աշխատանքի մասնակից ես, վոր գու կապ-ված ես ընդհանուր շահերով, և, վերջապես, հարդել սոցիալիս-տական համակեցության կանոնները»:

Մենք սոցիալիզմ ենք կառուցել, մենք դաստիարակում ենք կապիտալիստական հարաբերությունների ամեն տեսակ մնացուկ-ներից ազատ նոր մարդ:

«Մեր խորհրդային հասարակությունը հասավ այն բա-նին, վոր նա արդեն հիմնականում իրականացրեց սոցիալիզ-մը, ստեղծեց սոցիալիստական կարգեր, այսինքն՝ իրակա-նացրեց այն, ինչ վոր մարդասիստների մոտ այլ կերպ կոչ-վում ե կոմոնիզմի առաջին կամ ստորին փուլ»¹:

Հարդել սոցիալիստական համակեցության կանոնները—այդ նշանակում ե պայքարել սոցիալիստական կենցաղի համար, հա-սարական պարտականությունների նկատմամբ սոցիալիստա-կան վերաբերմունք ունենալու համար, ընտանիքի նկատմամբ սոցիալիստական վերաբերմունք ունենալու համար, հանրային սեփականության նկատմամբ սոցիալիստական վերաբերմունք ու-նենալու համար: Այդ պահանջներն առանձնապես արտացոլված են 131-րդ և 132-րդ հոդվածներում:

131-րդ հոդվածն ասում ե.

«ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր ե պահ-պահնել ու ամրացնել հանրային սոցիալիստական սեփակա-նությունը, վորպես խորհրդային կարգերի սրբազն ու ան-ձեռնմինելի հիմք, վորպես հայրենիքի հարստության ու հզո-րության աղբյուր, վորպես բոլոր աշխատավորների ունեոր ու կուլտուրական կյանքի աղբյուր:

¹ Ստալին. Զեկուցուր ԽՍՀ Միության Սահմանադրության նախագծի. ժա-սին Խորհրդային ՎԻՊ համարմիութենական Սրտակարդ համագումարում:

Հանրային, սոցիալիստական սեփականության դեմ վո-տընձգություն անող անձերը ժողովրդի թշնամիներն են»:

Արտադրության միջոցների սոցիալիստական սեփականու-թյունը վերացնում է շահագործման հնարավորությունը, յերկրի արտադրողական ուժերի առավելացույն զարգացման հնարավո-րություն և ստեղծում: Սոցիալիստական սեփականությունը—այդ համաժողովրդական սեփականություն և, նվաճված և տասնյակ հազարավոր աշխատավորների քրտինքով ու արյունով, վորոնք ընկել են քաղաքացիական պատերազմում, վլուզման տարինե-րին: Դրա համար այդ հանրային, սոցիալիստական սեփականու-թյան նկատմամբ վլունձգություն կատարող անձերին Սահմա-նագրությունն անվանում է ժողովրդի թշնամիներ:

Ահա թե ինչու նա յուրաքանչյուրից պահանջում է պահպա-նել ու հարցել հանրային սոցիալիստական սեփականությունը վորպես հայրենիքի հարստության աղբյուր, վորպես ունեօր և կուլտուրական կյանքի աղբյուր՝ ԽՍՀՄ-ի բոլոր աշխատավոր-ների համար:

Մի հատուկ հոդված խոսում է յուրաքանչյուր խորհրդային քաղաքացու մյուս սրբազն պարտականության ու պարտքի մա-սին—հայրենիքի պաշտպանության մասին: 132-րդ հոդվածն ա-սում ե.

«Բնդիսանուր զինվորական պարտականությունն որենք և հանդիսանում:

Զինվորական ծառայությունը Բանվորացյուղացիա-կան Կարմիր բանակում, այդ—ԽՍՀՄ-ի քաղաքացիների պատվավոր պարտականությունն ե»:

Յեթ այնուհետև 133-րդ հոդվածն ասում ե.

«Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ-ի յուրաքան-չյուր քաղաքացու սրբազն պարտքն ե: Հայրենիքին դավա-ճանելը—յերդումը խախտելը, թշնամու կողմն անցնելը, պետության սազմական հզորությանը վնաս հասցնելը, լրաե-սությունը—պատժվում են որենքի ամբողջ խստությամբ, վորպես ամենածանր չարագործություն»:

Այս հոդվածը—որենք ե և լուրջ նախադպուշացում: Հայրե-նիքի դավաճանության վերաբերյալ որենքը դավաճանների հա-մար միայն մեկ դատավճիռ դիտելու վեհականարություն: Կապի-տականության շրջապատման և Փաշխտական պետությունների կողմից սպասվող պատերազմի մշտական սպանությալիքի որայիման-ներում մենք չենք կարող թույլ տալ, վոր մեր չարքերում քո-

դարելեն այդ ոճերը—Փաշիզմի ստորագումը դործակալները, ժողովրդի թշնամիները, կապիտալիզմի մերկապարանոց ռեստարատորները, մատնիչները, լրտեսները, դիվերսանտները։ 133-րդ հոդվածն ասում է, վոր հայրենիքի դավաճանությունը պատրժվում և որենքի ամենայն խստությամբ, վորպես ամենածանր չարագործություն։

Մարդասպանների տրոցկիստական-դինովյելական բանդայի վնասարարների, դիվերսանտների և լրտեսների 1936 թ. ողուտասայն դատավարությունը (Զինովյեվը, Կամենեվը և մյուսները) և առանձնապես տրոցկիստական հակախորհը բայցին կննտրունի (Պյատակով, Ռադեկ և այլն) 1937 թվի հունվարյան դատավարությունը ցույց տվին, թե ինչպես լայն եյին ծավալել իրենց լրտեսական ու վնասարարական աշխատանքն այդ ճապոնա-դերմանական-Փաշիստական դործակալները, կապիտալի վարձկանները և նրանց ուղղակի դաշնակիցները—աջերը, հայրենիքի այդ բոլոր դավաճանները, կապիտալիզմի ռեստարանները։

Ընկեր Ստալինը Համկ(ր)կ կենտկոմի պլենումում 1937 թվի մարտի 3-ին տված իր զեկուցման մեջ մատնանշեց։

«... վոր ներկայիս վնասարարներն ու դիվերսանտները, ինչպիսի դրոշակ եւ՝ տրոցկիստական թե բաւարինյան, նրանք դիմակալվորվեն, վաղուց արդեն դադարել են բանվորական շարժման մեջ քաղաքական հոսանք լինելուց, վոր նրանք վերածվել են պրոֆեսիոնալ վնասարարների, դիվերսանտների, լրտեսների, մարդասպանների անսկզբունք ու դաշավարագուրկ բանդայի»։

Պրոլետարական դատարանն իր դատավճռով ցույց տվեց, վոր հայրենիքի դավաճանների դեմ պայքարելու մասին Սահմանադրության պահանջն անշեղորեն ու հետեղականորեն կենսա-

դորձվում է։

ԽՍՀՄ-ի բոլոր աշխատավորները և համայն աշխարհի աշխատավորները վողջունեցին դատարանի այդ վճիռը վորպես միակ հնարավոր և միակ ճիշտ վճիռ։

Ընկեր Ստալինը Համկ(ր)կ կենտկոմի պլենումում տված զեկուցման և յեղափակման խոսքի մեջ մինչև վերջը բացահայտեց այն պատճառները, վորոնք ողնում եյին այդ յերկերենսանիներին, հայրենիքի դավաճաններին՝ թափանցելու մեր կուսակցության չարքերը։

Հեղափոխական զգաստության բարձրացումը և քաղաքական շրջահայեցությունն ամենավստահելի միջոցն են՝ կանխելու ժո-

ղովրդի թշնամիների թափանցումը մեր կուսակցական ու տնտեսական կազմակերպությունների մեջ և վերջնականապես լիկիդդացիայի յենթարկելու լրացներին, դիվերսանտներին, վնասարարներին։

Համկ(ր)կ կենտկոմի պլենումի վորոշումների լույսի տակ Ել ավելի մեծ նշանակություն են ստանում Սահմանադրության վերոհիշյալ հոդվածները, վորոնք խոսում են ԽՍՀՄ-ի քաղաքացիների մասին։

ԽՍՀՄ-ի քաղաքացիների պարտականություններն, այսպիսով, հանգում են՝ հանրային աշխատանքի վերաբերյալ պարտականությունների, հանրային սոցիալիստական սեփականության հանդեպ պարտականությունների, սոցիալիստական համակեցության կանոնները պահպանելու պարտականությունների, պետության հանդեպ պարտականությունների։

Յես կարծում եմ, վոր ԽՍՀՄ-ում չկա վո՞չ մի աշխատավոր, վորն իր պարտքը չհամարի բոլորի առաջ հանդիսավոր խոստում առալու, վոր ամեն կերպ, աղնվորեն և հետեղականորեն, մինչև վերջը, չխայելով իրեն ու իր կյանքը, կկատարի այդ պարտականությունները։

Սահմանադրությամբ յուրաքանչյուր քաղաքացու արված իրավունքների պահպան հանդիսանում և 126-րդ հոդվածը։ Այդ հոդվածը խոսում և քաղաքացիների կազմակերպվելու, և միավորվելու իրավունքի մասին, և ամենից առաջ կոմունիստական կուսակցության մեջ միավորվելու մասին։ Այդ հոդվածի մեջ առված է.

«Եւխատավորների շահերին համապատասխան և ժողովրդական մասսաների կազմակերպական ինքնագործունելությունն ու քաղաքական ակտիվությունը զարգացնելու նպատակով ապահովվում և ԽՍՀՄ-ի քաղաքացիների իրավունքը՝ միավորվելու վարպես հասարակական կազմակերպություններ՝ արհեստական միություններ, կոոպերատիվ միավորուներ, յերիտասարդության կազմակերպություններ, սպորտային և պաշտպանողական կազմակերպություններ, կուլտուրական, տեխնիկական ու գիտական ընկերություններ և այլն։»

Այս բոլոր կազմակերպությունների մեջ կարող ե մտնել յուրաքանչյուր քաղաքացի, նրա համար, վորպեսի իր ուժերը զործացրի սոցիալիզմը ԽՍՀՄ-ում ամրապնդելու և լիակատար կորունդը կառուցելու։ Այնուհետեւ 126-րդ հոդվածն ասում է.

«... Իսկ բանվոր դասակարգի շարքերից ու աշխատավորների մյուս խավերից յեկած ամենից ավելի ակտիվ ու գիտակից քաղաքացիները համախմբվում են Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության մեջ, վորն աշխատավորների առաջավոր ջոկատն ե՝ սոցիալիստական հասարակարգն ամրացնելու ու զարգացնելու համար նրանց մղած պայքարում և աշխատավորների բոլոր, ինչպես հասարակական, այնպես ել պետական կազմակերպությունների ղեկավար կորիգն ե»:

Այս հոդվածը բացառիկ նշանակություն ունի իր բովանդակությամբ:

Նա խոսում է այն մասին, վոր բանվոր դասակարգի և աշխատավորության մյուս խավերից յեկած ամենից ավելի ակտիվ ու գիտակից քաղաքացիները, վորոնք Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության անդամներ են, առաջատար, ղեկավար ղեր են խաղում սոցիալիստական շինարարության մեջ:

Կոմունիստներն այն մարդիկն են, վորոնք կոմունիզմի համար մղվող կովում իրենց հետերից են տանում աշխատավորության լայն մասսաները: Կոմունիստները պետք ե կարողանան մերկացնել և ձևել դասակարգային թշնամիներին: Բոլշևիկ-ենինյանները չեն վախենում զժվարություններից, նրանք դիտեն պայքարել զժվարությունների ղեմ և հաղթահարել նրանց:

Ընկեր Ստալինը Խորհուրդների Ա համամիութենական համապուտմարում ասել է.

«Մենք, կոմունիստներս, առանձին կերպածքի մարդիկ ենք: Մենք հատուկ մատերիալից ենք ձևված: Մենք նրանք ենք, ովքեր կազմում են սլորետարական մեծ սորատեղի բանակը, ընկեր լենինի բանակը: Ավելի բարձր բան չկա, քան այդ բանակին պատկանելու պատիվը: Ավելի բարձր բան չկա, քան այն կուսակցության անդամի կոչումը, վորի հիմնադիրն ու ղեկավարը հանդիսանում ե ընկեր լենինը: Ամեն մարդ չի կարող այդ կուսակցության անդամը լինել: Ամեն մարդ չի կարող դիմանալ այդ կուսակցության անդամության հետ կապված ձախորդություններին ու փոթորիկներին: Բանվոր դասակարգի վորդիները, կարիքի ու պայքարի վորդիները, անհավատալի դրկանքների և հերոսական ջննքերի վորդիներ—ահա թե ովքեր, ամենից առաջ, պետք ե ինեն այդպիսի կուսակցության անդամները: Ահա թե ինչու

լենինյանների կուսակցությունը, կոմունիստների կուսակցությունը, դրա հետ մեկտեղ կոչվում ե նաև բանվոր դասակարգի կուսակցություն»¹:

Յերբ առաջին ամերիկյան բանվորական պատմիրակության հետ ունեցած զրույցի ժամանակ ընկեր Ստալինին հարցրին, թե մեզ մոտ ինչումն ե արտահայտվում կոմունիստական կուսակցության ղեկավարությունը կառավարության նկատմամբ, ընկեր Ստալինը պատասխանեց.

«Նախ և առաջ՝ նրանով, վոր մեր յերկրում պետական աշխատանքի. հիմնական պոստերի համար կոմկուսակցությունը ջանում ե Խորհուրդների և նրանց համադրումարների միջոցով անցկացնել իր թեկնածուներին, իր լավագույն աշխատողներին, վորոնք նվիրված են պրոլետարիատի գործին և պատրաստ են հավատով ու ճշմարտությամբ ծառայելու պրոլետարիատին: Յեվ այս նրան հաջողվում ե հսկայական մեծամասնություն կազմող գեպքերում, վորովհետեւ բանվորներն ու զյուղացիները վատահությամբ են վերաբերվում կուսակցությանը: Սա պատահականություն չե, վոր իշխանության որդանների ղեկավարներ մեղանում հանդիսանում են կոմունիստները, վոր նրանք, այդ ղեկավարները, հսկայական հեղինակություն են վայելում յերկրում:

Յերկրորդ՝ նրանով, վոր կուսակցությունն ստուգում է կառավարության որդանների աշխատանքը, իշխանության որդանների աշխատանքը՝ ուղղելով սիալներն ու թերությունները, առանց վորոնց չի լինում, ողնելով նրանց կենսագործելու կառավարության վճիռներն ու աշխատելով առաջովիշտ նրանց համար մասսաների աջակցությունը, ընդունում նրանք վոչ մի կարեօր վճիռ չեն ընդունում առանց կուսակցության համապատասխան ցուցումների:

Յերրորդ՝ նրանով, վոր իշխանության այս կամ այն որդանների աշխատանքի պլանը մշակելիս, լինի դա արդյունաբերության ու գյուղատնտեսության զծով, թե առեւտքի ու կուլտուրական շինարարության զծով, կուսակցությունը տալիս ե ընդհանուր ղեկավար ցուցումներ, վորոնք վորո-

1 Այսալին. Ճառ Խորհուրդների Ա համամիութենական համապուտմարում, 1924 թվի հունվարի 28-ին:

շում են այդ որդանների աշխատանքի բնույթն ու ուղղությունն այդ պլանների գործողության ժամանակվահամար»¹:

Յեվ կուսակցությունը պրոլետարական դիկտուրայի զոյտթյան տարիների ընթացքում գործով ապացուցեց, վոր նաերոք զիտե, թե դեպի ուր պետք ե տանել գործը, և դժվարություններից չի վախենում: Յեվ հենց դրա համար աշխատավորության լայն մասսաները դնում են կուսակցության հետեւից, հավատում են կուսակցությանը: Յեվ դրա համար ել Սահմանադրությունը հռչակում ե ամենից ավելի ակտիվ ու գիտակից քաղաքացիների այդ իրավունքը՝ միավորվելու կոմունիստական կուսակցության մեջ, պայքարելու հանուն լավագույն ապագայի և լիակատար կոմունիստական կարգերի հաստատման: Ստալինյան Սահմանադրությունն ասում ե. մենք ունենք միայն մեկ ձանապարհ—այդ կոմունիստական կուսակցության զեկավարությամբ դեպի կոմունիզմի լիակատար հաղթանակ տանող ձանապարհն ե. ամեն մի ուրիշ ճանապարհ մեղ կշեղի կոմունիզմից, կտանի դեպի կապիտալիստական հասարակության ռեստավրացիան:

Կոմունիստական կուսակցությունը հսկայական հեղինակություն և նվաճել: Կոմունիստական կուսակցությունը յեղել ե, և ու կլինի առաջատար կորիզն աշխատավորության բոլոր կազմակերպություններում, վորի մասին ել խոսում ե ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը:

Ահա թե ինչու ԽՍՀՄ նոր Սահմանադրությունը

«... ուժի մեջ և թողնում բանվոր դասակարգի դիկտուրուրայի ոեժիմը, ինչպես և առանց փոփոխության պահպանում և ԽՍՀՄ-ի կոմունիստական կուսակցության ներկայիս զեկավար դիրքը»²:

Ահա 126-րդ հոդվածի նշանակությունը:

Բայց յեթե Սահմանադրությունը կոմունիստաներին անվանում և բանվոր դասակարգի և աշխատավորության մյուս խավերից գուրս յեկած ամենից ավելի ակտիվ քաղաքացիներ, նա դրանով իսկ նրանց վրա դնում ե ևս մեկ պարտականություն, մեծ պարտականություն, վորի մասին մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինն ասել ե 1924 թվին, Լենինի թարմ շիրիմի առաջ,—զնա-

հատել, աչքի լույսի պես պահպանել կուսակցության անդամները կոչումը:

Յեվ Սահմանադրությունը, վորի մեջ արտացոլվել ե մեծ Ստալինի հանճարը, վորի մեջ ներդրված ե նրա հզոր ոտեղծագործական ուժը, մեղանից յուրաքանչյուրիս համար կոչ ե՝ մեր աշխատանքում և մեր գործունեյության մեջ դրսկորել այն հատկությունները, վորոնք հատուկ են բոլշևիկներին, հատուկ են կոմունիստական կուսակցությանը, վորպես արժանավոր այդ կուսակցությանը, մինենք ընկեր Ստալինի արժանավոր աշակերտաները, մինենք իսկական լենինյան-ստալինյաններ:

1 Ստալին, Զբույց ամերիկան տանջին բանվորական պատվիրակության ՀՀտ. «Լենինիզմի հարցերը», էջ 223 (Հայկուսըրատ, 1935 թ.):

2 Ստալին, Զեկուցում ԽՍՀ Միության Սահմանադրության նախազիմ մասին Սորհուրդների VII համարի թեսնական Արտակարգ համագումարում:

Թարգմ. Հ. Թուքջյան

Խ. Ա. Կիրակոսյան

Տեխն. խմբ. Ա. Խաչատրյան

Սրբագրիչ Վ. Զիլեզյան

Կոնուրու սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավլիսի լիազոր Ի-4897

Հրատ. № 476, պատվեր № 143, տիրաժ 10.000

Հանձնված և արտադրության 20/VII 1937 թ.

Ստորագրված և տպագրելու 10/VIII 1937 թ.

Գի՞ն. 60 կ.

Հայկուսհրատի տպարան, Յեղեռն,

Ծլավերդյան № 71

ՀՀ Ազգային գրադարան



NL0218065

387

35. 541

Чис 60 кн.

Н. КРЫЛЕНКО

ОСНОВНЫЕ ПРАВА И ОБЯЗАННОСТИ
ГРАЖДАН СССР

Армштартиздат, Ереван, 1937